This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·
Digitized by Google

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՕՐ

ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ

(ՀԱՅ ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

Արտատպուած «Մուրճ»-ից:

ԳՐԱԴԱՐԱՆ
Կարգաթիւ 1650

ԹԻՖԼԻԶ
Արագատիպ Ա. Քութաթելաձէի, Նիկ. 21.
Скоропечатня А. Кутателадзе, Ник. 21.
1905

Digitized by Google

Дозволено цензурою г. Тифлисъ, 16-го Декабря 1904 года.

Digitized by Google

GRAD
EREN
2741
11-01-93

ՄԻ ՔԱՆԻ ՕՐ

ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ

Ա.

Յունիսի վերջին օրերից մէկն էր, երբ ես Թիֆլիսի երկաթուղու կայարանում, վագոնի մէջ նստած, անհամբեր սպասում էի գնացքի մեկնման։

Վագոնի մէջ այնքան տօթ էր, որ մարդուց նստած տեղը քրտինքը ծըծլում էր։

Նոյն վագոնում էին ի միջի այլոց տեղաւորուել և մի ռուս ու մի վրացի զինուորականներ, որոնք Հեռաւոր Արևելք էին ուղևորւում։ Առաջինը կանգնած էր պատուհանի մօտ և աշխատում էր հանգստացնել իր վզովն ընկած ամուսնուն, որ անկարող էր զսպել իր հեկեկանքը, իսկ երկրորդին ճանապարհ էր գցում նրա մօտ 20 տարեկան սիրուն սևազգեստ աղջիկը, որի աչքերը կարմրել էին և ուռել արտասու-

Digitized by Google

քից. Նա այժմ աշխատում էր պահել իր լացը։

Կողքիս նստած էին երկու ռուս, երեք երկաթուղային մեքենավարներ, որոնք գընում էին մոտիկ կայարաններից մէկը։ Դրանք հիմնաւորապէս երկրպագել էին Բաքոսին և իրանց հետ վագոն էին մտցրել մի տկճոր լիքը գինով։ Տկճորը դրել էին նստարանի տակ և յաճախ քնքշութեամբ դիմում էին նրան «հորթուկ» փաղաքշական խօսքով։

Գնացքը շարժուեց։ Բոլորը տեղաւորուեցին. ճանապարհ գցողները այլևս աւելորդ տեղ չէին բռնում։ Պատուհաններից քամի փչեց, դիւրացաւ մեր շնչառութիւնը։

Վրացի զինուորականը նստել էր իմ դիմաց։ Բաքոսի երկրպագուներից մէկը հանեց նստարանի տակից «հորթուկին», ուղղելով նրան միքանի փաղաքշական ածականներ, լքցրեց էմալէ թասը և դիմելով վրացի զինուորականին ասաց.

—Թոյլ տուէք, ձերդ պայծառափայլութիւն, խմել ձեր կենացը և ցանկալ ձեզ կատարեալ աջողութիւն պատերազմում։ Տայ Աստուած, որ դուք վերադառնաք կռուից ողջ ու առողջ և ձեր կուրծքը զարդարուած

Digitized by Google

լինի մի շարք շքանշաններով։ Խմում եմ մեր արծիւների—ռուս հերոսների կենացը. Թող դրանք ջարդ ու փշուր անեն մեր յանդուգն թշնամուն... Ձերդ պայծառափայլութիւն, ինձ էլ կը վերցնէք ձեզ հետ, ա՞, ես նրանց ցոյց կը տամ...

Իշխանը շնորհակալութիւն էր անում. Նա կասկած չունէր որ հզօր Ռուսաստանը կը յաղթի իր թզուկ ոսոխին։ Ինքը եղել էր ռուս-տաճկական պատերազմում և գիտէր ռուս զինուորի անվեհերութիւնը. բացի այդ, նա համոզուած էր որ գեներալ Կուրոպատկինի նման ռազմագէտ հազիւ գտնուի աշխարհում...

—Կեցցէք, կեցցէք, բղաւեցին մեքենավարները, դէ խմեցէք, ձերդ պայծառափայլութիւն. դուք հերոս էք, մեր բոլոր զինուորականները հերոսներ են, կեցցեն մեր արծիւները...

Երբ կայարաններից մէկում մեր այդ հարևանները անհետացան իրանց «հորթուկի» հետ, իշխանը իրան շատ թեթևացած զգաց։

Ազատուած տեղը գրաւեց մի վրացի երիտասարդ քահանայ։ Վրացի հոգևորականը և զինուորականը իսկոյն ծանօթա-

Digitized by Google

ցան և զրոյցի բռնուեցին։ Բնականաբար խօսակցութեան առարկան պատերազմն էր։ Երևում էր որ քահանան հետևում է մամուլում լոյս տեսնող բոլոր տեղեկութիւններին. մինչդեռ իշխանը արհամարհանքով էր վերաբերւում «գրչակների» և «թղթակիցների» «յիմար», «սուտումուտ» հաղորդումներին. Նա իրան մասնագէտ էր համարում և՝ այն ինչ պրոֆաններիս թւում էր յաղթութիւն—նա համարում էր պարտութիւն, և՝ ընդհակառակը... Զուր էր տէրտէրը փորձում առարկութիւններ անել. իշխանը հեղինակաւոր կերպով շարունակում էր զարգացնել իր ռազմական ծրագիրները...

Կէս գիշեր էր և դեռ քնի մէջ ես լսում էի դրանց տաք վէճը և՝ «Ճապոնացի», «Պորտ-Արտուր», «ռուսաց էսկադրա», «գեներալ Կուրոպատկին» խօսքերը։

Լուսաբացին իջայ Եւլախ կայարանում. մեր իշխանը ամուր փաթաթուել էր եափինջում և խռմփում էր, իսկ քահանան չկար։

*
* *

Եւլախը գտնւում է Քուռ գետի աջ (հարաւային) ափին. այդ կայարանից պոստային ճանապարհ է գնում դէպի հիւսիս՝ Շէքիի մայրաքաղաք Նուխին և դէպի հարաւ՝ Ղարաբաղի մայրաքաղաք Շուշին։

Ես ուզում էի մի ուղևորութիւն կատարել մեր հին Արցախ և Սիւնիք նահանգներում, որոնք միասին այժմ բռնում են Գանձակ նահանգի մեծ մասը։

Եւլախից Շուշի գնում են նաև մասնաւոր կառքեր։ Ես վերցրի դեմոկրատիական հանրակառքում մի տեղ. ինձ տուին մի տոմսակ, որի վրայ նշանակուած էր գինը՝ 5 ռուբլի. բանից դուրս եկաւ որ այդ գինը գոյութիւն ունի միայն նրանց համար, որոնք սովորութիւն չունին սակարկութիւն անելու. աւելի փորձուած ուղեկիցներս վճարել էին 2—3 ռուբլի։

Հանրակառքը լցուել էին հայ երեխաներ, կանայք և միքանի երիտասարդներ. մեզ հետ էր և մի հրէայ օրիորդ—ատամնաբոյժ, որ ամառը գնում էր Շուշի՝ իր արհեստը գործադրելու։ Առաջի անգամը չէր որ Իսրայէլի այդ դուստրը մին-մենակ ճանապարհորդում էր՝ սեփական աշխատանքով իր գոյութիւնը պահպանելու հա-

Digitized by Google

մպը․ նա միքանի անգամ գնացել էր նոյն նպատակով Թաւրիզ։

Իր պրակտիկի համար նա հասկանում էր հայերէն և թուրքերէն միքանի խօսք միայն, բայց յուսահատուել չգիտէր այդ տօկուն և ընդունակ ցեղի զաւակը։

Հանրակառքը արդէն լի էր ճամբորդներով, երբ մի կայարան անց մի փափախաւոր թուրք էլ ուզեց նստել կառապանի մօտ։ Մեր ուղեկից շուշեցի պարոններից մէկը այնպիսի աղմուկ հանեց, այնպէս ուժգին սկսեց կռուել կառապանի և կոնդուկտորի հետ որ խեղճ թուրքը պիտի մնար ճանապարհին։ Նեղ դրութիւնը հնարագէտ դարձրեց նրան․ մի ակնթարթում նա վեր մագլցեց և նստեց հանրակառքի կտրին։ Այդ խորամանկութիւնը բոլորին ծիծաղացրեց, և թողին նրան այնտեղ՝ տապակուելու արևի այրող ճառագայթների տակ։

*
* *

Մեր ճանապարհը ընկած էր յատակի նման հարթ դաշտավայրով․ հին Հայաստանի Ուտի նահանգով էինք առաջ ընթանում։ Մեզնից դէպի արևմուտք և հարաւ հեռ-

Digitized by Google

տում կապտին էին տալիս Արցախի լեռները, որոնք ականատես էին դեռ ևս երկու դար առաջ Հայոց մելիքների ազատագրական ջանքերին...

Հին Ուտին շատ յաճախ անցել է հարևան աղուանների ձեռքը, որոնց թագաւորութեան իսկական սահմանը եղել է Քուռ գետը։ Աղուանից աշխարհը բռնում էր այժմեան Շէքի-Շիրվանը։ Սակայն ի զուր չէ ասած «սահման քաջաց՝ զէնն իւրեանց». աղուանները միշտ երբ իրանց ուժեղ են զգացել՝ տիրել են նաև Ուտի նահանգին, որ իր աշխարհագրական դիրքով Աղուանից աշխարհի շարունակութիւնն է։ Այժմ այդ աղուանների հետքն էլ չկայ Կովկասում, իսկ ուտիացիներից մնացել են երկու-երեք գիւղեր Նուխիի կողմերում։ Իրաւ է, պատմական Ուտի նահանգի մայրաքաղաք և երբեմն Աղուանից կաթողիկոսութեան աթոռանիստ կենտրոն Պարտաւը այժմ էլ գոյութիւն ունի, սակայն նա ներկայացնում է այժմ մի կոյտ ողորմելի խրճիթների, իրանց թուրք բնակիչներով։ Այդքան փոփոխական է ազգերի ճակատագիրը...

Դէպի հարաւ ընթանալով դժուարութեամբ անցնում էք Թարթար, Խաչէն,

Digitized by Google

Գարգար գետերով. սրանք սկիզբ են առնում Արցախի բարձրաբերձ, անտառազարդ և զով լեռներում, ապա կատաղի հոսանքով իջնում են Առանի դաշտավայրը և ամառուայ տաքից լռում ու չորանում այդտեղ, մերկացնելով այլանդակ քարերով ծածկուած իրանց հունը։ Լեռնոտ Հայաստանի այդ գետերը յիշեցնում են ձիւնապատ սարերում ազատ օդի մէջ մեծացած երէները, որոնք մեռնում են, երբ նրանց վար են իջեցնում խորշակահար տափաստանները...

* * *

Միայն Խաչէն գետը անցնելուց յետոյ նկատելի է դառնում ձեր վերելքը։ Եւ երբ մտնում էք Գարգար գետի հովիտը և անցնում Նրա մուտքը երբեմն կապող Ասկերան բերդի աւերակների միջով — շրջապատող բնութիւնը ստանում է լեռնային բնաւորութիւն։

Գետի միւս ափին տեղ-տեղ երևում են ռուս գաղթականների հիմնած Նոր գիւղերը, որոնք տեղական լանդշաֆտի մէջ տարբեր կուլտուրայի և կենցաղի տեսարաններ են մտցնում։

Digitized by Google

Խանքենդի կայարանից սկսած օձապտույտ ճանապարհը արդէն զառիվեր գնում է Շուշի։ Դեռ չհասած այդ քաղաքը դուք ճանապարհին առիթ ունէք տեսնելու մեր տնտեսական կեանքում տոկունութիւն և ձեռնարկող ոգի ցոյց տուող շուշեցու նոր գործեր. գարեջրի գործարան, կաթնատընտեսական ֆերմա…

Արդէն մթնել էր։

Քաղաքը գտնւում է ծովի մակերևոյթից 5020 ոտնաչափ բարձր, սարի գագաթին։ Վերելքը ընականաբար դանդաղ էր կատարւում։ Բոլորս սաստիկ ջարդուել էինք ու յոգնել։ Երեխաները ամենաբնական դիրքերում անգամ քնել էին մեռելների նման։ Կամքը թուլացել էր և մեծերի մօտ. մարդ անզօր է այդ յոգնածութեան մէջ իշխել իր ջղերի և մկանների վրայ. աչքի կոպերը ծանրանում են և իրանք իրանք խփւում, չնայած ձեր բոլոր հակառակութեան. գլուխը թուլացած շլինքի վրայ սկսում է ամեն կողմ օրօրուել, ինչպէս հասունացած հասկը քամուց։ Երբեմն ննջողի գլուխը ինքն իրան այնպիսի թափով յետ է ընկնում մէջքի վրայ, որ թւում է թէ վիզը պէտք է կոտրուի. մարդ սթափւում է, կծում է շըր-

Digitized by Google

թունքները որ ցաւից չքնի, սակայն ի զուր. վաստակաբեկ օրգանիզմը ընկճուած է, կորցրել է իր կամքը և անձնատուր եղել քնին։

Յանկարծ այնպէս ուժով սկսեց մեր կառքը վեր վար թռչկոտել, աջ ու ձախ թեքուել, որ կարծես սաստիկ ալեկոծութեան բռնուած նաւակ լինէր։ Պէտք էր ձեռքերով ամուր բռնել նստարանի կողքերից—կառքից դուրս չը նետուելու համար։ Մենք մուտք էինք գործել Ղարաբաղի մայրաքաղաքը, և նրա խորդ ու բորդ, քարերով ու փոսերով ծածկուած գլխաւոր փողոցը թափահարում էր մեզ, այդ ձևով «բարի գալուստ» յայտնելով։

Կարելի է առանց չափազանցութեան ասել որ Շուշուայ հիմնադիր Փանահ-Խանի օրից մինչև այժմ միայն մի փոփոխութիւն են կրել այդ «սալայատակները», այն էլ երբ Աղա-Մահմէդ-խանը աւերել է քաղաքի հետ և նրա փողոցները... Քաղաքացիները վերաշինելով իրանց սեփական տները, հասարակութեան սեփականութիւն — փողոցները թողել են աւերուած վիճակի մէջ։ Եւ դեռ երկար կը մնան այդպէս, որովհետև Ղարաբաղի «դուման» սպասում է որ

Digitized by Google

Եւրոպայում սալայատակելու աւելի կատա-
րելագործուած և էժան միջոցներ գտնեն...
մի՞թէ արժէ քաղաքն էլ ու մուտք անող
կառքերի համար ծախքեր անել...

*
* *

«Բարի գալուստի» ալեկոծութիւնից ա-
ւելի ցնցող էր Շուշուայ «բարի ճանապար-
հը»։ Ես և իմ ուղեկիցը վերցրել էինք պոս-
տի կառք, լծած Ղարաբաղի չորս ոչ հըռ-
չակաւոր նժոյգներ։

Կառքը պէտք է բարձրանար Շուշուայ
առաջնակարգ փողոցով և դուրս գար Գո-
րիսի ճանապարհը։ Մի քանի քայլ արինք
թէ չէ, պոստատան առաջ կառքը կանգ
առաւ. Նրա առաջի անիւները քարերից
մերկացած փողոցի փոսերի մէջ էին ըն-
կել, ձիերը չէին կարողանում դուրս քաշել
կառքը քարերի և փոսերի այդ խառնիխուռն
աւերակներից։

Մենք դուրս եկանք կառքից. իջաւ և
կառապանը, որ յոգնել էր խեղճ անասուն-
ներին մտրակելուց։ Կառապանին օգնու-
թեան հասաւ մի իշապան իր գաւազանով.
հարայհրոցը, ծեծը անկարող էին օգնել

հասարակութեան անհոգութիւնից առաջ եկած չարիքին։ Մեր ողբալի դրութիւնը այնքան սովորական մի բան էր թւում բուն շուշեցիներին, որ կողքի կոկիկ. քարաշէն տներից միայն ժպտում էին։ Ստիպուած էինք մի քանի արհեստաւորներ հրաւիրել, որ մեր կառքի անիւներից բարձրացնեն։ Եւ այդպէս հարայհրոցից, մտրակի և գաւազանի հարուածներից ահաբեկուած ձիերը հազիւհազ կարողացան ղատարկ կառքը դուրս բերել այդ երանելի քաղաքից...

Եւլախից մինչև Շուշի ամբողջ 104 վերստ տարածութիւն անցնելով կառքը, ձիերը, ճանապարհորդները ջարդուփշուր լինելու այնքան վտանգ չեն կրում, ինչքան այդ քաղաքի գլխաւոր փողոցով միքանի քայլ անելու ժամանակ։

Մենք ստիպուած էինք ամբողջ զառիվերը ոտքով բարձրանալ։ Ազատուելով քար ու փոսերից, քաղաքի դարբասի մօտ կառապանը կանգնեցրեց հալից ընկած ձիերին։ Մինչ մենք նստած կառքում սպասում էինք որ հանգստանան ձիերը, միքանի քայլ հեռու մեր առաջ ներկայանում էր կեանքի մի բնորոշ պատկեր. շուշեցի միքանի մանր առևտրականներ կանգնեցրել

Digitized by Google

էին մի գիւղացու, որ ջորու վրայ բարձած ճտերով լի կողովներ՝ քաղաք էր գնում։ Վաճառականները պաշարել էին գիւղացուն. մէկը բռնել էր ջորու սանձից, միւսը կըռները դրել էր կողովների վրայ, որոնց մէջ ճվճվում էին ճտերը, իսկ երկու հոգի բըռնել էին գիւղացու թեւերից ու օձիքից եւ «ման օլըմ, տուր, ման օլում, տուր» աղերսանքով պոկ չէին գալիս։ Գիւղացին չէր համոզւում «անաստուած էժան գնով» զիջել իր ապրանքը։

—Դէ, բաց թողէք, ձեռք քաշէք, չեմ ծախում, ասացի։ Թողէք ասում եմ...

Ո՞վ էր լսողը, տզրուկների պէս կպել էին եւ պոկ չէին գալիս...

Գառքը շարժուեց տեղից, հեռուից ես յետ նայեցի. դեռ շարունակւում էր բռնի սակարկութիւնը...

Բաւականին նեղ եւ անփոյթ շինած պոստային ճանապարհն ընկած է Գարգար գետի մի վտակի հոսանքով, ձորի արեւմըտեան լանջի վրայ։ Կանաչապատ սարերի բուսականութիւնը աւելի ճոխ է դառնում երբ մօտենում էք «Թթու-Ջուր» կոչուած տեղին, որ Շուշուց դէպի հարաւ-արեւմուտք 18 վերստ հեռաւորութեան վրայ է գտըն-

Digitized by Google

տում։ Թթու-Ջուրը ղարաբաղցիների կիսլօ-վոդսկն է. Նրանք սիրում են գործածել այն հանքային ջուրը, որ բղխում է այդ տեղում։ Արցախի այդ «նարզանը» շշերով ծախում են ոչ միայն Շուշի, այլ և Բաքու, Գանձակ։

Թթու-Ջրում ապրելու համար բնակարաններ չկան. եթէ յարմարութիւններ ստեղծուէին, նա կը դառնար զով և գեղեցիկ ամարանոցավայր։

Պոստային կայարանի դիմացի սարը տեսնելով՝ կարելի է հասկանալ թէ ինչու ռուսները Լըսօգորսկ (ճաղատ սար) են անուանել Թթու-Ջուրը. դիմացի մի գագաթ մերկ է և այդ «ճաղատութեան» շուրջ ծառերը կազմում են խիտ անտառ, որ առհասարակ ծածկում է բոլոր լեռնային լանջերը և ձորերը։ Նմանութիւնը ճաղատ գլխի շուրջ բուսած մազերի հետ բաւական մօտ է, թէև ոչ բանաստեղծական... մանաւանդ երբ նկատում էք այդ անտառներում արածող հօտեր ու նախիրներ...

Digitized by Google

Բ.

Հայաստանի մակերևոյթը ծածկուած է անթիւ լեռնագօտիներով ու ձորերով։ Քար ու հողից կազմուած այդ կնճիռների լաբիւրինթոսում դժուար է որոշ ուղղութիւն և կանոնաւորութիւն գտնել, եթէ չը ղեկավարուել գետերի ընթացքով։ Արցախն ու Սիւնիքն էլ պատած են խիտ և խճճուած կնճիռներով, որոնցից ամենահսկայականը ընկած է· Կուր և Արաքս գետերի միջև, սկիզբն առնելով Սևանայ լճի հարաւ-արևելեան անկիւնից։ Արցախ-Սիւնիքեան այդ գալարուն և հսկայ լեռնագօտու ձիւնապատ գագաթների ծերպերում և խուլ ծմակներում սկիզբ են առնում մի կողմից Կուր գետի մեզ ծանօթ բազուկները—Թարթառ, Խաչէն և Գարգար—և միւս կողմից՝ Արաքսի ձախակողմեան բազուկներից Հաքարին և Որոտնը։

Այդ լեռնագօտու հիւսիսային լանջի վրայ է մեր տեսած Թթու-Ջուրը։

Դարիվեր ճանապարհը իսկոյն հասցնում է մեզ կայարանից լեռնագօտու կոհակաւոր ողնաշարին։ Մի տնկած սիւն

Digitized by Google

իր ցուցանակով մեզ իմացնում է որ դուրս ենք գալիս Շուշու գաւառից և մտնում Զանգեզուրի սահմանները։

Ճանապարհից աջ և ձախ երևում են լեռնագօտու ամենամերձաւոր գագաթները՝ Սարըբաբան և Սաղսաղանը, որոնք պահապանների նման հսկում են Արցախից Սիւնիք տանող ուղին։ Չնայած որ յուլիս ամիսն է, այդ գագաթների խորշերում դեռ սպիտակին են տալիս ձիւնի շերտեր։ Ճանապարհի այդ ամենաբարձր կէտից փռւում են մեր առաջ Սիւնեաց աշխարհի մերձաւոր ձորերն ու լեռները, ներկայացնելով կանաչ կոհակների մի ամբողջ ծով։ Անտառների կանաչ սաղարթը հեռուից սևին է տալիս. զարմանալի չէ որ այդ երկիրն խուժած թաթարական ցեղերը տուին նրան Ղարաբաղ (սև բաղ) անունը։

Սակայն ինչ հիմունքով Արցախի և Սիւնիքի սահման համարել այդ լեռնագօտին և ոչ նրանից քսան վերստ հարաւարևմուտք գտնուող Հաքարի գետը։ Ահա թէ ինչու։— Եթէ ի նկատի առնենք որ հնում շինուած ճանապարհներ չկային, պէտք է չափազանց դժուարանց լինէր այդ լեռնագօտին. մինչդեռ յայտնի է որ հայը հնում գիտէր հըս-

Digitized by Google

կայական և ամուր կամուրջներ շինել,— մի գործ որ նրա աչքում եկեղեցի կառուցանելու չափ հոգու վարձք էր. այսօր էլ դուք ժողովրդի բերնից կը լսէք «հենց իմացիր եկեղեցի կամ կամուրջ ես շինում» խօսքերը, երբ նա մի բան թախանձանքով խնդրում է ձեզնից։ Բացի այդ, լեռնագօտին աւելի է կլիմայական տարբերութիւն մտցնում իր հակառակ լանջերում, քան գետը իր երկու ափերում։ Հետևաբար, թող մեր հնագէտները այնքան էլ չվրդովուեն, եթէ բռնազբօսիկ տրոհում ենք մտցնում Արցախի և Սիւնիքի մէջ. չմոռանանք որ ժողովուրդն էլ այդ կէտում մեզ հետ համամիտ է. «սարի էն ղոլը» արցախեցու բերնում նշանակում է Զանգեզուրը...

* * *

Լեռնագօտու ողնից զառիվայր օձապտոյտ ճանապարհը ձգւում է մի խոր ձորի հիւսիսային լանջով։ Ձորի յատակում հոսում է Հաքարի գետի վտակներից մէկը։ Այն ամբողջ կանաչ տարածութիւնը, որ փռուած է այժմ մեր առաջ՝ Ղարաղշլաղ հայկական մեծ գիւղի հողերն են։ Վարում

են, ցանում, հնձում հայ ժրաջան աշխատողները և առիւծի բաժին տալիս իրանց վաստակից դատարկապորտ բէգերին. Թաթար նուաճողների շառաւիղներից են դրանք և այժմ օրէնքով շարունակում են տիրել մի ժամանակ բռնի ուժով խլած վայրերին։ Բէգական տիտղոսներով մահմէդական բռնակալների նոքարները այժմ «ազնուական» դասակարգ են կազմել և օգտւում են այն հանգամանքից, որ Անդրկովկասում դեռ չի իրագործւում գիւղացիական հողաբաժինների յետգնման օրէնքը։ Բայց արտօնեալ դրութիւնը չի արգելում որ ընտանեկան բաժանումը և բէգական ծուլութիւնը յաճախ տնտեսապէս քայքայեն այդ «ազնուականներին» և դրանցից շատերին դարձնեն սովորական թուրք «փահլաններ»։ Կարիքի երկաթէ օրէնքը ստիպում է տգէտ բէգերից շատերին ապրուստ հայթհայթելու համար բրիչ ու բահ բռնել այն ձեռներում, որ ըստերևոյթին ստեղծուած էին որսորդական բազէներ պահելու...

Գուցէ մի այդպիսի բէգ էր այն «փահլան», որ մեր կառքը մօտենալիս հաւաքեց իր բահն ու բրիչը ճանապարհից, ուր նա

քանում էր, և, մի կողմ քաշուելով, դիմեց մեզ.

—Աղա, նեմ թազա խաբար։—Նա նոր տեղեկութիւն էր հարցնում ռուս-ճապոնական պատերազմի մասին...

*
* *

Մի քանի վերստ անց, մի դուքանի առջև մարդկանց մի խումբ էր երևում. հայ և թուրք գիւղացիներ էին, շրջապատուած սպառազէն ռուս զինուորներով։ Այդ կալանաւորները զոյգ-զոյգ շղթայուած էին ձեռներից, որպէսզի չփախչեն։ Բանից դուրս եկաւ որ անպասպորտների մի «էտապ» էր այդ, ուղղակի Բագուից։

Մերձակայ գիւղական մի քանի խրճիթներից դուրս էին թափուել հայ կանայք իրանց բնորոշ հագուստներով և սարսափից կարեկցութեամբ նայում էին ճանապարհով քայլող այդ կալանաւորներին, որոնք սաստիկ քաշւում էին, կարծես ուզում լինէին մի կերպ հասկացնել՝ թէ իրանք յանցաւորներ, չարագործներ չեն...

—Ի՞նչ են արել այդ խեղճերը,—հարցրեց մի պառաւ մեր կառապանից։

Digitized by Google

—Առանց պաշպորտ քնեացալ ըն Բագու, պոլիցան փռնալ ա ետ ա ըղարկում,— եղաւ պատասխանը։

Առաջի անգամից անհասկանալի էր թւում գիւղացիների այդչափ անփութութիւնը. չէ՞ որ պասպորտը տրւում է ձրի, էլ ինչո՞ւ չվերցնել տանուտէրից և այնպէս գնալ քաղաք աշխատանքի։ Բայց... բանը հէնց այդ «բայցի» մէջ է. այն գիւղացին, որի վրայ տուրքի ապառիկներ կան՝ չի ստանում անցաթուղթ։ Եւ ահա ստեղծւում է մի անել դրութիւն. անցաթուղթ ստանալու համար նա պէտք է վճարի իր վրայ մնացած հարկերը. իսկ վճարելու համար պէտք է պանդխտի. այդ էլ առանց անցաթղթի չի թոյլ տրւում։ Եւ միակ ելքը մնում է՝ քաղաք գնալ առանց անցաթղթի, այն յուսով որ աննկատելի կը մնայ այնտեղ և, մի քիչ դրամ վաստակելով, յետ կը գայ և իր պարտքերը կը վճարէ։ Յոյսը մեծ մասամբ ի դերև է ելնում, և... «էտապով» յետ են ուղարկւում իրանց ծննդավայրը ոտքով, շղթայակապ...

*
* *

Ահա և Հաքարին իր վճիտ, փրփրադէզ ալիքներով։ Մենք անցնում ենք նրա ամենածանծաղ հունով, բայց և այնպէս ջուրը քիչ է մնում թափուի կառքի մէջ։ Գետի լայն հովտից ճանապարհը սկսում է դարիվեր բարձրանալ, ոլոր-մոլոր անցնելով թթենի և կեռասենի պուրակների կողքով։ Մենք պէտք է կտրենք մի ամբողջ լեռնադաշտ, որ ընկած է Հաքարիի և նրա աջ Բազուկ՝ Զաբըղ գետի միջև։

Անտառապատ լանջերի փոխարէն մեզ շրջապատում են վարելահողեր, պտղատու ծառերի պուրակներ։

Միքանի ժամ անց իջնում ենք և Զաբըղի հովիտը, անցնում նրա փռուած, բաժան-բաժան եղած ջրերով, առանց կամուրջի։ Հները մեր երկրում գիտէին կամուրջներ շինել, իսկ ճանապարհները թողնել Աստծու կամքին. այժմ ընդհակառակն է կատարւում. տեղ-տեղ ճանապարհներ շինում են այդ խուլ գաւառական անկիւններում, իսկ կամուրջների կառուցումը համարւում է շռայլութիւն…

Զաբըղի հովտից դարձեալ վերելք և մեր առաջ ընդարձակ լեռնադաշտ մինչև

Digitized by Google

Որոտն գետի ձախակողմեան բազուկը՝ Կո-
րիսի գետը։

Այդ ընդարձակ լեռնադաշտի վրայ գտնւում են միքանի մեծ գիւղեր զուտ հայ ազգաբնակութեամբ. դրանցից մէկը մեր ճանապարհի վրայ է և կոչւում է Տեղ, իսկ ուսները թուրքերից աղաւաղած Դըղ անունն են ընդունել։ Այդտեղից մինչև Կորիս 20 վերստ է։

Մօտ 500 տնից բաղկացած այս գիւղի մէջ երևում են երկյարկանի և պատշգամբաւոր տներ։ Ունի տարրական ուսումնարան։ Պատահում են եւրոպական տարազով մարդիկ և կանայք։ Արտերում տեսնում էք կատարելագործուած երկաթէ գութաններ։ Չկարծէք թէ Գիւղատնտեսական Ընկերութեան կամ կուսակցական ազրոնոմների ջանքերով են մտել այդ գութանները գիւղացիական տնտեսութեան մէջ։ Ո՛չ. կեանքի նիւթական պահանջներում մեր գիւղացին սովորել է ինքն իր գլխի ճարը տեսնել, որովհետև շատ երկար նա պէտք է սպասի որ բիւրօկրատիական մեխանիզմը շարժուելով իրան էլ հասնի...

Աւելի անմխիթարական է գիւղացու վերաբերմունքը դէպի ոչ նիւթական, այլ

Digitized by Google

մորալ պահանջները. Նրա մտաւոր զարգացումը, օրինակ, այն վիճակի մէջ չէ, որ տպագրական խօսքը նրա համար պահանջ լինի։

Գիւղերում այժմեան դպրոցական ուսուցիչներն էլ մեծ մասամբ տեղական ժողովրդից կտրուած պաշտօնեաներ են։ Կողմնակից լինելով «բնական մեթոդին», որով դասաւանդութիւնից իսպառ հեռացւում է մայրենի լեզուն, հազիւ թէ այդ գործիչները նպաստեն ընթերցասիրութեան։ Դպրոցներին կից չկան գրադարաններ, ընթերցարաններ, չեն կազմակերպւում դասախօսութիւններ. մի խօսքով սկզբնական դպրոցը չի կատարում այն դերը, որ յատուկ է նրան, օրինակ, զեմստվական նահանգներում...

Աւելի ևս մեծ է Խնձորեսկ գիւղը, որ չի երևում ճանապարհից և ընկած է լեռնադաշտի հարաւային մասում։ Այդ գիւղը ունի աւելի քան 600 տուն, մօտ 4000 բնակիչներով։ Ասում են՝ կան միքանի տասնեակ հազար դրամագլուխ ունեցող գիւղացիներ։ Բագուից ներմուծուել են շռայլութեան իրերը և մոդային հետևելու պահանջներն անգամ, սակայն ամբողջ գիւ-

Digitized by Google

դում չի ստացւում մի օրինակ «Մուրճ» երևի աւելի բախտաւոր չեն օրաթերթերը։ Պարզ է որ մոլալ, մտաւոր պահանջները թմրած վիճակի մէջ են. դրանց զարթեցնելու համար հարկաւոր են՝ հասարակական ույժերի աւելի ազատ գործադրութիւն յօգուտ ժողովրդի մտաւորականութեան և՝ կրթական հաստատութիւնների աւելի սերտ կապակցութիւն տեղական պայմանների հետ. մի խօսքով այն, ինչ այնքան գեղեցիկ կերպով ձևակերպեց ներքին գործոց մինիստր Սվեատոպոլկ-Միրսկին, շեշտելով կառավարութեան վստահութեան մասին դէպի ինքնավարական մարմինները և բարեացակամ վերաբերմունքը դէպի ազգաբնակութեան կարիքները...

*
* *

Այնքան քիչ անցուդարձ անողներ են պատահում ճանապարհին որ մարդ առանձին հետաքրքրութեամբ է աչք դարձնում հեռւում երևցող փոշու ամենամի ամպի վրայ։ Մեր մօտով սրընթաց անցաւ պոստային սայլակառք՝ ակցիզառու պաշտօնեաներով։ Այդ ռուս մարդիկ իրանց պարտականու-

Digitized by Google

թիւնների շնորհիւ ստիպուած են մուտք գործել ամենախուլ անկիւններն անգամ և շփուել խաւար գիւղացիների հետ, որոնց մէջ դեռ ևս կենդանի են պարսկական ռեժիմի աւանդութիւնները։ Յաճախ իրանց իրաւունքների անգիտակ գիւղացիները համակերպւում են դրանց բացարձակապէս ապօրէն պահանջներին։

Ինձ մի վստահելի ականատես, օրինակ, պատմում էր հետևեալ դէպքը, որ պատահել էր հէնց միքանի օր առաջ մի հայ գիւղում։

Գիւղի հրապարակում ձիուց իջնում է մի սպառազինուած ակցիզաւոր և զոռոզաբար հրամայում մօտը կանգնած գիւղացուն.

—Է՛յ, բռնիր ձիուս սանձը։—Գիւղացին բռնում է, սակայն պատկառանքով և խոնարհութեամբ յայտնում է.

—Աղա, ես գործ ունեմ, պէտք է գնամ։

Ակցիզաւորն իսկոյն բռնկւում է այդ «ընդդիմադրութիւնից» և սկսում մտրակել գիւղացուն, ամեն մի հարուածի հետ հայհոյանքների տարափ թափելով խեղճի գլխին։ Եւ որքան մեծ համբերութեամբ է գիւղացին տանում այդ բոլորը, այնքան կատա-

Digitized by Google

դի է դառնում յարձակումը։ Հարուածողը, իր ձեռները աւելի ազատ շարժելու նպատակով, գետին է գցում իր շապկի օսլայած թևնոցները։ Հանդիսատես գիւղացիներից մէկը իսկոյն վազում է և ակնածութեամբ վերցնելով այդ թևնոցները՝ ձեռքին բռնած սպասում է, մինչև որ հանդարտուի «աղա ակցիզնին», ապա ստրկական խոնարհութեամբ մատուցանում է օսլայած թևքերը ըստ պատկանելոյն...

Պատմողը զարմացաւ, երբ ես ասացի թէ տուժողը իրաւունք ունէր գանգատուելու ակցիզառուի ապօրէն գործողութիւնների համար։ Այդ խուլ անկիւններում օրէնքի վարկը իհարկէ գցում են նկարագրած տիպի պալոնները...

*
* *

Փոշին ճանապարհի վրայ աւելի մեծ չափեր էր ստանում. մեր առջևից գնում էր «քոչը»։ Թուրքեր էին. ասենք, տեղացի քիւրդերն էլ քիչ են տարբերւում թուրքերից. շիա կրօնը և պարսկական ռեժիմի դարևոր ազդեցութիւնը ի մի են ձուլել տարբեր ցեղական ծագում ունեցող այդ

Digitized by Google

մահմէդականներին․ քիւրդերը մոռացել են իրանց լեզուն, տարազը և դառել են շըրջապատող Թուրքերի նման՝ շիա մուսուլմաններ։

Կանայք, տղամարդիկ, ծեր, երեխայ, բեռնաբարձ ձիեր, եզներ ու գոմէշներ, խումբ-խումբ արջառ, ոչխար, շներ—այդ բոլորը մի խառնիճաղանջ բազմութիւն էր կազմում։

Աւելի կեղտի, չարքաշութեան, ծայրայեղ անկուլտուրականութեան տպաւորութիւն էր թողնում այդ քոչը, քան բանաստեղծական հրապոյրներ պարունակում։

Վերջապէս դուրս եկանք այդ ժխորից, որ լցնում էր օդը փոշով, մարդկանց հարայհրոցով ու ճիչով, շների հաչոցով և տաւարի բառաչով։

Ճանապարհը զառիվայր պտոյտներով իջնում էր Կորիսի գետի հովիտը։

Հեռուից երևաց գետի միւս ափում, հարթ դաշտավայրի վրայ փոքրիկ Նոր Կորիսը, որ միայն այս տարի գաւառական քաղաք լինելու պատիւն ունեցաւ։ Գետի ձախ ափին Հին Կորիս գիւղն է։ Նրա յետևից սարը բարձրացել է ինչպէս մի պարիսպ մի շարք կոնաձև աշտարակներով։

Digitized by Google

Ճաքարի գլխի նման կանգնած այդ բուրգերը բնութեան մի խաղ է, առաջացած շատ պարզ պատճառներից. անձրևի կաթիլները, թափուելով փխրուն հողի շերտերի վրայ, պոկել են ու տարել աւելի թոյլ կպած մասնիկները, և մնացել են ժայռի կտորների տակ պաշտպանուած շերտերը։ Այժմ էլ կարելի է նկատել հողային կոնաձև սիւներից միքանիսի գլխին գլխարկի նման դրած քարի մեծ կտորները. ժամանակի ընթացքում այդ քարէ գլխարկներն էլ կ'ընկնեն, ինչպէս արդէն ընկել են շատ սիւների գագաթներից, և աւելի արագ առաջ կը գայ անձրևի կաթիլների աւերիչ դերը. կը մաշուեն, կը քերուն, կը փոքրանան այդ կոնուսները։

Այդ հողային բուրգերի մէջ ծակուած են խորշեր, որոնք այժմ էլ ծառայում են իբրև բնակարան, խոտանոց։ Անշուշտ այդ այրերից շատերը բնական են, սակայն կան և մարդկանց ձեռքով փորուածներ։ Միքանիսի մուտքը այնքան բարձր է գետնից, որ պէտք է սանդուխներով բարձրանալ։

Արհաւիրքներով լի մահմէդական բռնութեան տարիներում այդ ծակերը կամ «քարատակ»-երը հայերի համար եղել են

Digitized by Google

թագնուելու տեղեր. պարանի սանդուխներով էին նրանք բարձրանում՝ ապաստանելու այդ ծակերում, յետոյ իրանց յետևից վեր էին քաշում պարանը և այդպիսով կըտրում գետնի հետ հաղորդակցութիւնը։

Քիչ սև օրեր չեն տեսել Սիւնիքի հայերը հիւսիսից խուժած լեզգիներից, արևմտքից ասպատակող օսմանցիներից և հարաւից հրով ու սրով յարձակուող պարսիկներից։ Բնիկ քիւրդ և թաթար ցեղերն էլ գայլերի նման դիշատում էին այդ թըշուառ հօտը։ Յիշած «ծակերը» քիչ օգնեցին հային և նա մտածեց Դաւիթ-բէգի ժամանակ սրի ուժով բարուոքել իր անտանելի կացութիւնը, բայց այդ փայլուն փորձն էլ խեղդուեց մահմէդական ծովում, ինչպէս անօգնական լուղորդի ջանքերը վիթխարի ովկիանոսի կատաղի ալիքների մէջ...

Այդպիսի «ծակերով» կամ քարանձաւներով է ծածկուած Կորիս գետի ամբողջ ձորը. երևի այդտեղից է «Ձագեձոր» հին անունը, որ թրքական աղաւաղ արտասանութեամբ (ծ, ձ հնչիւններ նրանք չունեն) դառել է Զանգեզուր։

*
* *

Digitized by Google

Այժմեան Զանգեզուր գաւառի մէջ մըտնում են հին Սիւնեաց աշխարհի տասներկու գաւառներից միայն մի քանիսը։ Դրանցից մէկով մենք արդէն անցանք. Արցախին սահմանակից այդ Աղահէճք կոչուած գաւառը բռնում էր, հաւանականօրէն, Հաքարի գետի վերին աւազանը։ Այդ գետի օժանդակ Զաբղից յետոյ մենք մտանք Հաբանդ գաւառը, որի կենտրոնումն է Գորիսը։

Ամբողջ օրը երկինքը ամպամած էր, եղանակը զով։ Երբ հասանք քաղաք սկսեց անձրև մաղել։ Դիմացի լեռները ծածկուած էին մշուշի թանձր քողով։

Կառապանիս յայտնեց որ այդ փոքրիկ նոր քաղաքում գոյութիւն ունեն երկու հիւրանոց. «Կոնկուրենցիա» և «Պրոգրես»։

—Ո՞րն է լաւը։

—«Կոնկուրենցիան», աղա։

Գաղափար չունենալով կորիսեցիների պրոգրեսի մասին, աւելի մատչելի համարեցի նրանց մերկանտիլ հասկացողութեան՝ կոնկուրենցիան... Եւ իսկապէս, ի՜նչ առաջադիմութիւն կարող էր լինել մօտ 3 հազար ազգաբնակութիւն ունեցող մի զուտ հայկական քաղաքում, ուր ոչ մի օրինակ... հայ ամսագիր չի ստացւում...—«Զարմանալի

Digitized by Google

չափ» կ'ասի ընթերցողը, որ լսել է թէ՝ գործածած սապոնի քանակութեամբ են որոշում «քաղաքակրթութիւնն ու պրոգրեսը»...—Հոգ չէ. ով որոշ շաբլոնների սիրահար է, թող այդպէս էլ շարունակի մտածել. ինձ թւում է որ իմ մաշտաբը, որոշ մորալ տեսակէտներով, աւելի պակաս ճշտութիւն չունի, քան ձեր սապոնն ու անուշահոտ ջրերը... Ասենք «Կոնկուրենցիայում» ինձ սպասում էր ոչ անուշ բուրմունք, այլ գարշահոտութիւն։ Չգիտեմ ինչ կը գտնէի «Պրոգրեսսում»...

Իմ իջևանած հիւրանոցը զետեղուած էր քարուկրից շինած մի երկյարկանի կոկիկ տնում, որի նման էին այդ Նոր քաղաքի ուղիղ և լայն փողոցների համարեա բոլոր շինութիւնները, բոլորն էլ Ղարաբաղի մայրաքաղաք Շուշու ճարտարապետական ոճի հետևողութեամբ։

Զարմանալի էլ չէ որ Շուշին, կամ ինչպէս ժողովուրդն է ասում՝ «Ղալան», այդպէս մեծ ազդեցութիւն ունի Կորիսի վրայ. Ղարաբաղի մայրաքաղաքը միակ «քաղաքակրթուած» կէտն է, որի հետ պոստ-հեռագրական յարաբերութիւն ունի Զանգեզուր գաւառի կենտրոն Կորիսը։ Ամբողջ

Digitized by Google

գաւառում, որ բռնում է 6,743 քառ. վերստ տարածութիւն, ուր հաշւում են 426 բնակավայր և 145,653 ազգաբնակութիւն, *)—այլ ևս ոչ մի կէտ չկայ, որ պոստ-հեռագրական հաղորդակցութեամբ միացած լինի ոչ միայն դրսի աշխարհի, այլև նոյնիսկ իր վարչական կենտրոն «Գերիւսի»ի հետ։

Գորիսում վերջանում են պոստն ու հեռագիրը։ Եթէ ձեզ հարկաւոր է նամակ ուղարկել դիցուք Հին-Նախիջևան, որ գտնւում է Զանգեզուրի գաւառում և Գորիսից շատ լինի հեռու 110 վերստ,—դուք պէտք է առաջուց իմանաք, որ պոստը տանելու է ձեր նամակը նախ Շուշի, Եւլախ, Թիֆլիս, Ալեքսանդրօպոլ, Երևան և ապա միայն Նախիջևան... Այսինքն, 110 վերստ անցնելու փոխարէն ձեր նամակը պտտելու է մերձաւորապէս 800 վերստ։ Եւ դեռ լաւ է եթէ տասներորդ օրը նա տեղ հասնի։ Այն էլ պէտք է ի նկատի ունենանք որ պոստը շաբաթը միայն երկու անգամ է գնումգալիս Գորիս... Առենք մեր գաւառական քաղաքներից շատերի համար դա նորմալ երևոյթ է...

---

*) Кавк. кал. 1904.

Տեղացիները գիտեն որ դեռ անցեալ դարի 60-ական Թուականներին ծրագրուած է եղել՝ միացնել Նախիջեւանը Կորիսի հետ պոստային ճանապարհով. նոյնիսկ շինուել է ճանապարհի մի մասը Նախիջեւանից մինչև Զանգեզուրի սահմանի մօտ գտնուող Բիչանագը, որ ծառայում է Նախիջեւանի չինովնիկների համար իբրև ամառանոց. սակայն Բիչանագից դէնը ճանապարհը մը- նում է մինչև օրս չշինուած, Թէև այդ մնացածը հազիւ 60 վերս տարածուԹիւն բռնի... Աւելորդ է երկարաբանել Թէ ինչ կուլտուրական և տնտեսական օգուտներից է զրկւում գաւառը հաղորդակցական այդ աղքատուԹիւնից և Թէ իսկական պրոգրեսը այս կողմերում որքա՜ն հեռու է չակեր- տաւոր պրոգրեսից...

Համեմատաբար աւելի բախտաւոր են գաւառիս Պղնձահանքերը (Մաղան), ուր գոյուԹիւն ունեն 8-ի չափ հանքեր և ձու- լարաններ, բանում են երկու հազարի չափ բանուորներ և միայն 1903 Թ. 56,065 պուդ պղինձ է հալուել *)։ ՀաղորդակցուԹիւն- ների բացակայուԹիւնը ահագին վնաս է

---

*) Պուդը ծախւում է 11—12 ռուբլի։

Digitized by Google

հասցնում և այդ արդիւնաբերութեան։

Ինձ յայտնեցին որ արդէն պոստի ճանապարհ է շինուած Կորիսից մինչև Հանքերը, սակայն դեռ ևս չի սկսուել անիւային հաղորդակցութիւնը, ուստի պոստը ուղարկւում է բեռնաբարձ։ Այդ էլ մի բան է…

Գ.

Միւս օրը կէսօրին ճանապարհ ընկայ Տաթև այդ վանքի վանահայր և վիճակիս յաջորդ Ներսէս վ. Մ.-Թանգեանի հետ, որ տասը տարի առաջ Շուշուայ թեմ. դպր. ուսուցչական խմբի անդամներից էր։

Վանքից շաբաթը երկու անգամ յատուկ մարդ են ուղարկում Կորիս՝ պոստ ստանալու։ Վանահայրը այս անգամ կարգադրել էր և ձիեր բերելու մասին։

Եղանակը զով էր և պարզ։ Մեր շաւիղը ընթանում էր նախ Կորիս գետի ափով ներքև, ապա, չհասած Քարահունջ գիւղին, մենք ծռեցինք արևմուտք և անտառապատ զառիվերով բարձրացանք մի ընդարձակ սարահարթ։ Այնուհետև բոլոր ժա-

Digitized by Google

մանակ, մինչև Որոտնի ձորը, հարաւ-արև-
ւելեան ուղղութեամբ էինք առաջ գնում։

Այդ ընդարձակ լեռնադաշտի հիւսիսա-
յին մասի հեռու հորիզոնում երևում էր
Իշխլու լեռնային խումբը իր ձիւնապատ
գագաթներով։ Իշխլուի ստորոտում, ասում
են, գտնւում է մի լիճ (Ղարագեօլ), որի
մօտերքում է սկիզբն առնում Կորիս գետը։
Զով և դալար Սիւնիքի Իշխլուն ամբողջ
ամառ իր գագաթների վրայ պահպանում
է ձիւնի ծածկոցը և ջուր է մատակարա-
րում իր կուրծքի ծերպերից հոսող վտակ-
ներին։

Ճանապարհին ամենմի քայլափոխում
դուք հանդիպում էք հրաբղխային զօրեղ
գործունէութեան անջնջելի հետքեր. հողը,
քարերը պատմում են ձեզ որ ժրաջան հայ
գիւղացու քրտինքով, յաճախ նաև արիւ-
նով ողողուած դաշտերը նախապատմա-
կան ժամանակներում ականատես են եղել
երկրի հրաբղխային սոսկալի ցնցումներին
ու ժայթքումներին։

Ճանապարհից աջ, սարահարթի վրայ,
կոնուսների նման զատ-զատ կանգնած են
երեք սարեր. այդ Ուչ-Թափալարի ստորո-
տում 180 տարի մեզնից առաջ Դաւիթ-

Digitized by Google

բէգը իր քաջերով յարձակուեց հայերին նեղող Ղարաչոռլու շիա քիւրդ ցեղի վրայ և ոչնչացրեց նրան. այդպէս սկսեց իր հռչակաւոր ապստամբական շարժումը այդ նշանաւոր սիւնեցի դիւցազնը...

Մեր առջևից հեռու հորիզոնում երեւում էր մի սրածայր գագաթ, որից աջ տարածւում է պարսպաձև լեռների մի շարք։

—Ի՞նչպէս են կոչւում այդ լեռները, հարցրի ձիուս յետևից ոտքով քայլող Խուդուց, վանքի ծառայից։

—Աղունասար, եղաւ պատասխանը.

Մեր շուրջը՝ հիանալի մշակուած արտեր, ճոխ աճած հացաբոյսերով, որոնց լի հասկերը բարձրից ներքև էին նայում Խուդու վրայ։ Ասենք Խուդին էլ մի երևելի հասակ չունէր, թէև նրա վտիտ մարմնի մէջ այնքան ոյժ կար որ նա յետ չէր մնում վանքի կերն ու հանգիստը առատօրէն վայելած մեր նժոյգներից։

Քարահունջի հողերին կպած են Խոտ և Շնհեր գիւղերի արտերը։ Այդ գիւղերը պատկանում են վանքին։ Այդպէս ուրեմն մենք մտել ենք Տաթևի ընդարձակ կալուածքի սահմանները։

Այդ հնադարեան վանքը այժմ ունի 9

Digitized by Google

գիւղ, չհաշուած վէճի մէջ 4 գիւղ, ինչպէս և Մեղրու և Կապանի զանազան տեղերում եղած մանր մունր կտորները։ Անվիճելի կերպով վանքին պատկանում է 21,400 դեսեատին տարածութիւն, որ բերում էր տարեկան 3,581 րուբլի եկամուտ։ Վէճի մէջ եղած հողերի մեծ մասը (մօտ $2^1/_2$ հազար դեսեատին) դատաստանական պալատում վճռուած է յօգուտ վանքի։

*
* *

Հալիձոր գիւղի սահմաններում մտանք վանքի անտառը և երկար ժամանակ մեր շաւիղը ոլոր-մոլոր պտոյտներ էր անում կաղնի, թխկի (кленъ), հացիկի (ясень) և այլ տեսակ-տեսակ ծառերի միջով. որոնց մէջ նկատելի էր տեղ-տեղ և արջածառ (рябина)։ Անտառային շաւղի վրայից կախկըխուած ճիւղերը ստիպում էին ամեն մի քայլափոխում գլուխ կռացնել։

Անտառից դուրս եկանք մի բաց տեղ։ Մօտերքում գտնւում էր Հալիձոր գիւղը, որ չէր երևում մեր կանգնած տեղից։ Ի դէպ, պէտք է նկատել որ այս Հալիձորը տարբեր է Դաւիթ-բէգի պատմութեան մէջ

Digitized by Google

հռչակուած Հալիձորից, որ գտնում է հին Բաղաց աշխարհում կամ այժմեան Ղափանում, ուր դեռ ցոյց են տալիս ուղևորին քաջ սիւնեցու անառիկ բերդի աւերակները…

Ինքը Որոտն գետը և նրա ձորի յատակը դեռ չէին երևում, այլ միայն դիմացի բարձր լեռնադաշտը, որի սեպաձև պատռուածքի եզրին զետեղուած է Երիցաթումբ գիւղը և՝ նրա յետևում՝ հարթ կանաչ սարալանջը, պարփակուած անտառախիտ լեռների կոհակներով։

Առաջ ընթանալով մի այլ բաց տեղից տեսայ հեռւում մի դալար բարձրավանդակի վրայ, անդնդախոր քարափի գլխին բուն դրած Տաթևի վանքը, իր երկու սրածայր կաթուղիկէներով։

Արդէն մօտ էր Որոտնի ձորը, մենք դուրս էինք գալիս Հաբանդ գաւառի սահմաններից և մտնում Հին Սիւնեաց Ծղուկ գաւառը, որ բռնում էր հնում Որոտնի կամ Բազարչայի վերին աւզանը։

*
* *

Դէպի Որոտնի ձորը իջնում է մի կե-

Digitized by Google

ռումեռ կածան. դրանից ձախ խորխորատ, իսկ աջ—փլուած ապառաժների անհռելի զանգուած։ Այդ սեպաձև, կախկխուած ժայռերի գլխից կարելի է միքանի զինուած մարդկանցով ամբողջ վաշտերի առաջն կըտրել. իզուր չէ այդ վտանգաւոր անցքը Սախկալ-Թութան կոչւում։

Անդնդախոր ձորի հակառակ կողմի բարձրաբերձ սարահարթը՝ սեպաձև իջնելով դէպի գետը՝ թողնում է իր և ջրի արանքում փոքրիկ տափարակ, որի վրայ շինուած է Մեծ Անապատը։ Նրա կողքով Տաթևի գետակը թափւում Որոտնը։ Երևում են Մեծ Անապատը շրջապատող քառակուսի հաստ պարիսպները, որոնց չորս անկիւնում մի-մի աշտարակ։ Այդ բերդ-անապատի կենտրոնում նկատելի է եկեղեցու կտուրը փոքրիկ գմբէթով և զանգակատնով, իսկ ներսում՝ պարսպին կից՝ մի շարք խուցիկներ։ Թէ Անապատի բակում և թէ շուրջը տընկուած են ահագին թթենիներ։

Ինձ ասացին, որ մի այլ Անապատ էլ գտնւում է Հալիձորի դիմաց և կոչւում է Հարանց Անապատ... Իրար կողքի երկու անապատ... XVII-րդ դարում, երբ շինուել են այդ անապատները, երևի հայերի մէջ ճըգ-

Digitized by Google

նելու տենչով բռնուած ահագին հօտեր կային… Այժմ չղջիկներն ու բուերն են բուն դրել այդ ամայի եկեղեցիներում և խուցերում, ուր այլևս ոչոք չի խանգարում նրանց անդորրութիւնը…

Հասանք ձորի յատակը։

—Բայց ուր է Արոտնը,—հարցրի ես վանահօրից.—մեր առջև գետին է մինչև միւս ափը։

—Իջնենք ձիուց, մենք Սատանի Կամուրջն ենք հասել. այդ գետինն է այն կամուրջը, որի տակից անցնում է Արոտնը։

Խուղին անցկացրեց մեր ձիերը ձորի միւս կողմը, որ ներկայացնում է սպիտակ, դեղին և կարմիր ժայռերի հաստ շերտեր. փորուածքներով ու խորշերով։ Ստալակտիտների զանազան ձևերի ու մեծութեան կախկխուած լեզուակներ, ապառաժների ճեղքերում բուսած վայրի խոտեր ու մացառներ ծածկում են յեռան վիթխարի կուրծքը, որ թաց է նրա խորքերից ծորող հանքային ջրերից։ Կամուրջի աջ կամ հիւսիսային կողմից ձորի երկու կողքերը իրար մօտեցել են և, կնճիռներ կիտած, դաժան հայեացքով իրար են չափում, կարծես պատրաստ են իրար վրայ

փլուել. բայց նրանց բաժանում է կատաղի Որոտը, որ, հիւսիսից գահավիժելով երկու հսկաների մէջ, լի ցասումով գոռում է, գոչում, կատաղութիւնից փրփրում և նրանց ոտների տակ ական փորելով փախչում ստորերկրեայ ճանապարհով։ Նրա ալիքները յորձանք տալով դուրս են վիժում կամրջի ձախակողմից և լաց ու կոծով հեռու փախչում այդ վտանգաւոր վայրից...

Սքանչացած բնութեան այդ ահռելի, միաժամանակ խրոխտ ու հոյակապ տեսարանից, ես ափսոսում էի որ նկարիչ չեմ՝ անմահացնելու համար Օրիներ և Դաւիթներ ծնող այդ ձորերից մէկի պատկերը...

Մեծ զգուշութիւններով մենք մագլցեցինք ժայռերի վրայ, որոնք վտանգաւոր էին իրանց խոտերի թանձրախիտ անմուտքով, և անցանք Սատանի Կամուրջի այն կողմը, որտեղից մուտք է գործում Որոտը։ Դա մի զարհուրելի վիհ էր իր երախի այլանդակ պատռուածքներով. փրփրադէզ Որոտը գահավիժւում էր և կորչում խոլական խաւարով ծածկուած ստորերկրեայ կամարների տակ. վերևից կախկխուել են ստալակտիտեան բիզ-բիզ ատամներ և ժայռերի ծերպերից՝ խոտեր ու մացառներ։

նման տեսարան է ներկայացնում և այդ բնական տունելի հակառակ կողմը։

Կարծես կիկլոպների հուժկու բազուկներ են իրար վրայ դիզել այն վիթխարի ժայռերը, որոնցից կազմուած է այդ բնական կամուրջը…

Միւս ափին հանքային տաքուկ ջրերի առաջ շինուած են նահապետական ձևով աւազաններ։ Այդտեղ մենք հեծանք մեր նժոյգները։

Արևը մայր մտնելու մօտ էր։ Մենք անցել էինք մօտ քսան և հինգ վերստ, առանց հանգստանալու։ Այժմ վերջին և ամենադիք վերելքն էր մեր առջև, վանքը հասնելու համար, որ Սատանի Կամուրջից չի երևում և գտնւում է մօտ երկու վերստ նրանից հարաւ-արևմուտք, դեռ հեռուից քիչ առաջ մեր տեսած բարձրաբերձ լեռնադաշտի եզրին։

Օձապտոյտ շաւիղը տեղ-տեղ այնքան դիք էր որ անսովոր մարդու թւում էր թէ անկարելի է ձիու մէջքից վար չգլորուել։ Մեր յոգնած նժոյգները հևալով վեր էին մագլցում և շուտ-շուտ կանգ առնում՝ շունչ առնելու համար։ Զառիվայրը ծածկուած էր ծառերով և թփերով և փլած ապառաժների ահագին կտորներով։

Digitized by Google

Ահա վերջին պտոյտը և քրտինքի մէջ կորած ձիերը հասան լեռնադաշտի գլուխը։ Ծռելով հարաւ լեռնադաշտի դէպի ձորը նայող եզերքով անցանք վանքի դեռ չհընձած արտերի կողքով և դուրս եկանք հնադարեան սրբավայրի հսկայ պարիսպների տակ։

Մթնել էր արդէն։ Կիսախաւարի մէջ լուռ կանգնած պարիսպներն ու բուրգերը, կամարակապ դարպասի գլխին ցցուած մատուռ-դիտանոցը և պատերի յետևից երկինք բարձրացող երկու սրածայր գըմբէթները ինչ-որ խորհրդաւոր վեհութիւն էին ներշնչում... Մարդ տխրութիւն ու սարսուռ էր զգում, յիշելով դրանց ալևոր գլուխներով հազար տարիների ընթացքում անցած քաղաքական արհաւիրքներն ու փոթորիկները, դրանց տեսած հալածանքները, կոտորածներն ու հրդեհմունքները...

Կամարակապ երկար անցքով ներս մըտանք վանքի բակը, ուր երկու վարդապետներ, հոգևոր վարչութեան քարտուղարը և միքանի ծառաներ սպասում էին վանահօր։

Վանահօր կարգադրութեամբ ինձ յատկացրին վանքի հիւսիս-արևելեան մասում

Digitized by Google

գտնուող շինութեան հիւրասենեակներից մէկը։

Դուրսը ցուրտ էր և մութ, ինքս վաստակած։ Այդքան սար ու ձորերի յետեւում, պատմական մի այդպիսի վայրում շատ հաճելի էր գտնել մաքուր, լաւ կահաւորուած ու լուսաւորուած օթեան և հանգստանալ։

Դ.

Պայծառ ու զով առաւօտ էր, երբ ես կանգնած սենեակիս առջև, պատշգամբի վրայ, զմայլւում էի Սիւնեաց աշխարհի մի հրաշալի լանդշաֆտով։

Դիմաց՝ կանաչ սարահարթ, որի մէջտեղում խրճիթների մի կոյտ—Տանձատափ գիւղը, հորիզոնում՝ Գապքոյլ լեռնագօտին, որի գագաթների վրայ տեղ-տեղ ձիւնի շերտեր են երևում։ Ձախ թևի վրայ՝ Որոտնի ձորը իրար թիկունք մտած բարձր կողերով, աւելի հեռու՝ Երիցաթումբը, լեռնադաշտեր, և հորիզոնում՝ արևի շողերի մէջ նշմարուող Դիզափայտի կոհակները։ Այդ հեռաստանը բաժանուած է իմ կանգնած տեղից մօտ եօթանասուն վերստ տարածութեամբ։ Աւե-

Digitized by Google

յի ես չքնաղ է տեսարանը, երբ Դիզափայտի լեռների յետևից ծագում է վարդաճաճանչ արշալոյսը։

Աջ թևի վրայ, կիսակործան պարիսպների յետևում, կանգնած է Տաթևի տաճարը իր դէպի արևելք նայող բաց ճակատով և ծածկում է հեռաւոր տեսարանները։

Շինութիւնը, որի երկար պատշգամբի վրայ ես կանգնած եմ, բաղկացած է մի շարք հին խուցերի կտուրների վրայ շինուած սենեակներից։ Հին խուցերի և նոր սենեակների յարկերը այդ ձև շաղկապուելով յենուած են իրանց մէջքով վանքի պարսպին։ Այդ շինութեան առջև գտնւում է ծառերով ու ածուներով բռնուած մի փոքրիկ տափարակ, որի եզերքը իջնում է դէպի անդնդախոր ձորը։

Իջնենք պատշգամբից, անցնենք վերև յիշած կիսակործան պարսպի միւս կողմը— վանքի բակը։

Վանքի բռնած տափարակը արևելքից, հարաւից և արևմուտքից դէպի անդունդներն է իջնում։ Այդ բնական պարիսպները երեք կողմից անառիկ են դարձրել բերդ-մենաստանը, մնում է անպաշտպան դէպի ձորը նայող տափարակի հակառակ

մասը, այսինքն լեռնադաշտի կողմից. այդ մասում էլ բարձրանում են վանքի հաստահիմ պարիսպները իրանց գոռոզ բուրգերով։

Վանքի թերակղզիաձև տափարակի վըրայ, աւելի մօտ նրա արևելեան եզերքին, կանգնած է տաճարը։ Բերդ-վանքի բռնած տարածութիւնը լաւ տնտեսելու նպատակով նրա բոլոր շինութիւնները, բացի եկեղեցուց, կամ կից տուած են պարիսպներին կամ իրանց դրսի պատերով ուղղակի հէնց անդնդի եզերքից են բարձրանում։ Այդպէս, վանքի կամարակապ մուտքի դիմաց՝ պարսպին կպած է ախոռատունը, նրա կողքին, արևմուտքից, ընթերցարանը և ապա մի շարք թաղածածկ խուցեր ու սենեակներ, որոնք բոլորակի գնում են հարաւակողմը, ուր գտնւում է սեղանատունը, առաջնորդարանը։

Մեր տեսած կիսակործան պատերի անկիւնում այժմ էլ ցոյց են տալիս սենեակ մի ստորերկրեայ անցքով, որով վանքում պաշարուածները իջնում են եղել Որոտնի ձորը՝ ջուր վերցնելու նպատակով։

Տաճարի երեք կողմից մնում է բաւական մեծ հրապարակ, որ, օգտուելով վան-

քի աղբիւրից, այժմ փորձում են բուրաստան դարձնել։

Տաթևի Տաճարը, ինչպէս յայտնի է պատմութիւնից, կառուցուած է IX-րդ դարում. այնուհետև թէ բնութեան և թէ իրար հետևող մի շարք թշնամիների առաջացրած աւերումները նորից շինուել են. ամենավերջին նորոգութիւնը այն վիթխարի գանգակատունն է, որ կառուցուել է տասը տարի առաջ, պահպանելով հին ճարտարապետական ոճը։

Դեռ IV-րդ դարում Տաթևի տեղում մի անշուք եկեղեցի է եղել շինուած։ Մինչև որ Սիւնեաց աշխարհի եպիսկոպոսական աթոռը գտնւում էր Որոտնի վերին հոսանքում, նրա աջ ափին (Անգեղակոթի դիմաց) հռչակաւոր Շաղատ գիւղաքաղաքում, որ մի ժամանակ Սիւնեաց իշխանների ոստանն էր, չէր մտածւում Տաթևի բնական ամրութիւններից օգտուելու մասին։ Բայց արաբական արշաւանքները ստիպեցին ուշք դարձնել Տաթևի վրայ. 839 թուականին Դաւիթ եպիսկոպոսը գնեց Սիւնեաց իշխան Փիլիպպէից այդ տեղը, ապա բարեպաշտ հայ իշխանների և տիկինների նուիրած կալուածներով ու գանձերով հարս-

Digitized by Google

տացած սրբավայրում 895—906 թուական-ներին կանգնեցին Պօղոս-Պետրոսի տա-ճարը։

Հարաւային կողմից նրա հետ ձուլուել է մի փոքրիկ եկեղեցի ևս, որ երկու ան-գամ հիմնովին կործանուել է, իսկ յետոյ երրորդ անգամ շինուել՝ Սիւնեաց աշխարհը մոռացութիւնից փրկող Ստեփաննոս Օրբէ-լեանի ձեռքով։ Այդ նշանաւոր պատմիչը ապրում էր XIII-րդ դարում։ Հետևեալ խօսքերով է անմահացրած նրա յիշատակը այդ ս. Լուսաւորիչ եկեղեցու դրան վրայ.

ԶՏէր Ստեփաննոս Մետրապօլիտ Սիւնեաց որ է Պրոտոֆրանտէս Հայոց Մեծաց, որդի մեծափառ իշխանին Տարսայիճի եւ շինող սուրբ Եկեղեցւոյս, յիշեցէք ի Քրիստոս:

Այդ եկեղեցու շարունակութիւնն է մի կամարակապ սիւնազարդ սրահ, որի տակ հանգչում է մի այլ նշանաւոր գրող և ե-կեղեցական գործիչ. Նրա դամբարանի վրայ կարդում ենք հետևեալ տողերը.

Շնորհիւն Այ շինեցաւ սբ. մատուռս Եօթնալոյս րաբունապետին եւ երկրորդ Ոս-կեբերանին երիցս երանեալ վարժապետին մերոյ եւ չորրորդ Լուսաւորչին որբոյն Գրի-գորի Տաթեւացւոյն և այլն։

Digitized by Google

Այդ այն Տաթևացին է, որ խօսքով, գրչով և գործով մաքառում էր XIV դարում ազգային եկեղեցու թշնամի Ֆրանկիսկեան և Դոմինիկեան կրօնաւորների դէմ և այսպիսով ընդդիմադրութիւն էր ցոյց տալիս ունիթոռական պրոպագանդային Հայաստանում։

Գրիգոր Տաթևացին ահագին ժողովրդականութիւն ունի մանաւանդ Սիւնիքում, ուստի զարմանալի չեն անկեղծ միամտութեամբ ձօնած չափազանցութիւնները այդ արձանագրութեան մէջ...

Բակի հարաւային մասում կանգնած է մի ութանկիւնանի օբելիսկ—դա վանքի հռչակաւոր սիւն-գաւազանն է, գագաթը պսակուած քարի մէջ քանդակուած խաչով։ Առաջնորդարանին կից եղել է մի պատշգամբ, որից ձեռքով կարելի էր հրել սիւնը և նա կ՚երերար իր տեղում. այժմ այդ պատշգամբը չկայ, իսկ սիւնը շրջապատուած է վանդակով և անշարժ կանգնած. այդ դրութիւնը երևի աւելի սազական են համարել վանական կեանքին...

Մտայ առաջնորդարանը կամ «թանաքան»,—գեղեցիկ կահաւորուած կամարակապ սենեակներ։ Դուրս եկայ առաջնոր-

դարանի պատշգամբը, որ կախուած է ուղղակի անդնդի վրայ և նայում է դէպի արևելք։ Գլուխ պտտեցնող բարձրութիւնից երևում են ներքևում՝ քարափի շարունակութիւն կազմող պատերը, նրանց տակ գտնուող սեպաձև ապառաժները, աւելի ներքևում սարի լանջից պոկուած մեծուփոքր քարերի խառնիխուռն կարկառ, ապա կանաչ զառիվայրներ և տափարակ մինչև Որոտնի փրփրադէղ հոսանքը։ Պատշգամբից երևում է Որոտնի ձորը, Սատանի Կամուրջը, Սախկալ-Թութանը, մեր եկած ճանապարհը և հեռաստաններ մինչև Դիզափայտի լեռները։

Առաջնորդարանից դուրս գալով անցանք բակը և մտանք վարդապետներից մէկի բնակարանը, որ բաղկացած է երկու փոքր սենեակներից. այդ կողմից ևս պատշգամբ կայ՝ կախուած դէպի Տաթևի ձորը իջնող քարափի գլխին։

*
* *

Ինձ հետաքրքրում էին վանքի պարիսպները և բուրգերը, իբրև հին բերդի

Digitized by Google

նմուշներ։ Բակից այդ պարսպների միայն վերևի մասն էր երևում։

Անցայ կամարակապ մուտքով, որի գլխին, ինչպէս սկզբում տեսանք, կանգնած է մատուռ-դիտանոցը։ Սրբատաշ քարերից կոփուած այդ փոքրիկ եկեղեցին շինուել է XI դարում և, իբրև հնութիւն, յամենայն դէպս, արժանի չէր հաւանոց դառնալու... Իհարկէ մեր մերկանտիլ դարում ձուն և հաւի միսը աւելի են գնահատւում, քան սրբութիւններն ու հնութիւնները, սակայն վանքում այլ վերաբերմունք կարելի էր պահանջել...

Կամարակապ անցքը վերջանում է։ Ձեր առաջ բացուած է ընկուզի տախտակից կռած-կոփած հաստուպինդ դուռը, որ իր վրայ կրում է անթիւ թշնամիների կատաղի հարուածների հետքեր, փոսեր։ Դռան կողքերից կանգնած են մի-մի քար և դրանց վերևից դրած է երրորդը. այդ միապաղաղ և տաշած 3 քարերն իրանց դասաւորութեամբ յիշեցնում են նախապատմական Յունաստանի Մեկինեան դռները։ Այդ քարերից վերինը արդէն ճաքել է։

Դռան առաջ երկու հաստահիմն սիւների վրայ յենուած է կամարը, որի տակ

կանգնողին կարող են տեսնել վերևից բացուող դռնակից, որ ծածկւում է քար սալով։ Դարպասից աջ ու ձախ հաստ պարիսպներն են, որոնք պաշտպանում են վանքի միակ անպաշտպան մասը լեռնադաշտի կողմից։ Ձախ պարիսպը, — որի յետևից՝ խուցերի կտրին շինուած մեզ ծանօթ նոր շինութիւնն է և բանջարանոցը, — շարունակւում է մինչև անդունդի եզերքը, իսկ աջ պարիսպը անկիւն է կազմում և ծըռւում արևմուտք ու հասնում Տաթև գետակի փորած խոր ձորի եզրը և շարունակւում՝ սեպաձև քարափի գլխով։ Պարսպի անկիւններում կանգնած են մի ժամանակ երևի գոռոզ բուրգերը երկշարք ծակերով։ Այդ գլանաձև բուրգերի դրսի մակերևոյթի վրայ աչքի են ընկնում գետնից բարձր, մի շարքի վրայ, երեք վիթխարի կտուցաձև ցցուածքներ սալաձև քարերից։ Իւրաքանչիւր կտուցի ներքևից բուրգի ներսն է տանում մի անցք։ Այդ կտուցների պաշտպանողական դերը չկարողացայ ինձ բացատրել։

*
* *

Digitized by Google

Իր ժամանակ Տաթեը հռչակուած էր իբրև զօրեղ ամրութիւն, այդ պատճառով հեռու գաւառներից անգամ ժողովուրդը յաճախ ապաստան է գտել նրա հաստուպինդ պարսպների յետևից։ Հեռաւոր Գողթան գաւառից անգամ փախչում էին Տաթևի վանքը։

Այն, ինչ անկարող է եղել կատարել հայերիս բաժան-բաժան եղած, պառակտուած ու թոյլ աշխարհական իշխանութիւնը, փորձել է իրագործել եկեղեցին։ Քաղաքական միացնող իղձալներից զուրկ մեր ժողովուրդը իր ամբողջ յոյսը դրել էր հոգևորականութեան ու եկեղեցու վրայ... Հնում իշխանները, բարեպաշտ հայ տիկիններն ու ժողովուրդը իրանց հոգու փրկութեան համար նուէրներ էր որ բերում էին վանքերին։

Տաթև մի ժամանակ ունեցել է մօտ 25 սեփական գիւղեր։ Տաթևի թեմում Ստեփաննոս Օրբէլեանից առաջ 1400 հայ գիւղ էր հաշւում, իսկ այդ պատմիչի ժամանակ 720։ Այժմ Տաթևի յաջորդութեան մէջ 90 գիւղ է մնացել 63 հազար ժողովուրդով։ 1903 թուականի ընթացքում, հ. յաջորդի մատեանների համեմատ, ծնուել են 1408

Digitized by Google

ար., 1204 իգ. սեռից, կատարուել է 683 պսակ, տեղի են ունեցել 502 ար. և 487 իգ. մահեր, ուրեմն 4284 դէպք, որոնցից դրամական շահ ունի հոգևորականութիւնը այդ յաջորդութեան մէջ։

Մի ժամանակ վանքում ապրում են եղել 500 կրօնաւորներ։ Մենք տեսանք Մեծ Անապատը, յիշեցինք, որ Նրա կողքին եղել է և Հարանց Անապատը բազմաթիւ ճգնաւորներով։ Երևակայեցէք թէ այդքան բերաններին լիութիւն տալու համար ինչ միջոցներ էին հարկաւոր։ Այժմ Անապատներն ամայի են, իսկ վանքում բացի վանահայր-յաջորդից կան երկու վարդապետներ, այն էլ մերձաւոր Տաթև գիւղից, որ հազիւ երկու վերստ հեռու լինի վանքից և գտնւում է Նրանից հիւսիս-արևմուտք, Պետրուսախաչ սարի ստորոտում։ 1897 թուականի ժողովրդագրութեամբ Տաթև գիւղում եղել է 1881 շունչ։ Վանքապատկան այդ գիւղում կայ սկզբնական մի ուսումնարան, որի ուսուցիչը յոյն է...

Չնայած որ վանքի ընթերցարանը բաց է բոլորի համար—գիւղացիները չեն օգտւում Նրանից։ Եւ ինչո՞ւ զարմանալ հասարակ տգէտ գիւղացիների վրայ, երբ ըն-

Digitized by Google

թերցանութիւնը պահանջ չէ նոյնիսկ վանքի երկու վարդապետների համար, որոնց միակ գործն է—օրը երկու անգամ եկեղեցում մեն-մենակ կանգնած ժամ ասել։ Բայց դրանց անընթերցասիրութիւնն էլ զարմանալի չէ. այդ ծերունիներից մէկը պարզամտութեամբ հաւատացած էր որ ճապոնացիները «հայ-քրիստոնեաներ» են...

Ե.

Յուլիսի 7-ին առաւօտեան ճանապարհ ընկայ Տաթևից դէպի հարաւ-արևմուտք, նպատակ ունենալով հասնել Քաջարանց գիւղը, որի հեռաւորութիւնը վանքից կը լինի մօտ 30 վերստ։

Տաթև գիւղում վարձել էին ինձ համար մի ձի և մի ջորի իրանց երիտասարդ տէրերով։

Դուրս գալով վանքից անցանք նրա միքանի ջրաղացների մօտով և քարէ կամրջով, որ մեզ հասցրեց վանքի տակով հոսող գետակի միւս ափը։ Պէտք է նկատել որ այդ գետակի մէջ հարաւից թափւում է մի այլ գետակ, որ ընդունում է իր

մէջ, դարձեալ հարաւից, երրորդը։ Վան-քից ներքև, չհասած Մեծ Անապատին, ե-րեքն էլ միացած թափւում են Որոտնը, իբրև մի օժանդակ, որին մենք տուինք՝ Տաթևի գետակ անունը։ Այդ երեք ճիւղե-րը կոչւում են Քարհանոնց, Աղանձու և Զղրուանի։

Ընթանալով դէպի հարաւ, մենք մերթ բարձրանալով, մերթ իջնելով, անցանք մի-ջին գետակի ձորով, ապա ամենահարաւա-յինի հովտով դիմում էինք հարաւ, դէպի Գազբոյլ լեռնագօտին։

Այդ գետակները իրարից բաժնող բլուր-ներից մէկ վրայից յետադարձ հայեացք ձգեցի և տեսայ հորիզոնի հիւսիսային մա-սում մեզ ծանօթ Իշխլուի ձիւնապատ գագաթները։ Իմ առջև՝ դալար, ճոխ արօ-տատեղիներով և խոտահարքներով ծած-կուած Գազբոյլի պարսպաձև լեռնաշարքն էր դիզացած։ Աջ թևի վրայ անտառապատ Հարսնավազ գօտին էր բաժանում մեզ հին Բաղաց աշխարհից կամ այժմեան Մագա-նից (Հանքերից)։ Ձախ կողմից՝ Լորուայ ձորի անջրպետ լեռներն էին։ Տաթևի ալե-ծածան լեռնաղաշտը՝ այդպէս պարփա-

Digitized by Google

կուած՝ բարձրանում էր դէպի հարաւ, մինչև Գազբոյլ լեռնագօտու ստորոտը։

Սարալանջերի վրայ ցիր ու ցան երևում են օբաներ, շրջապատուած արածող հօտերով և նախիրներով, որոնց խառն են և ձիեր, էշեր ու ջորիներ։

Անցնում ենք մի հայ օբայի մօտով։ Տէրերը հազիւ են կարողանում ահագին դագանակներով յետ քշել մեզանից կատաղի գայլանման շներին։ Վրանների առաջ հայ կանայք զբաղուած են իրանց գործով. մի տեղ չորթան են շինում և արևի տակ շարոտում դրանց սպիտակ կոնիկները, մի այլ տեղ խնոցի են հարում, երրորդ տեղ օջախի վրայ կաթ են տաքացնում... Ահա մի պառաւ կին խնամք է ցոյց տալիս նոր լոյս աշխարհ եկած գոմշի ձագին. Նրա շուրջը ցատկոտում են և վազվզում՝ հորթուկների, գառնուկների և շան լակոտների հետ խառնիխուռն՝ բոկոտն և կիսամերկ մանուկներ։

Բնութեան ծոցում, այդ մաքուր ու զով օդում, ճոխ արօտատեղիներում, անուշ ու սառնորակ ջրերի ափերին անասուններն էլ են իրանց զոհ ու զուարթ զգում։ Տեսէք, ինչպէս փայլում են նրանց մորթի-

Digitized by Google

ները․ կարծես իւղով օծուած լինին տնաշէնները…

Հասանք վերջապէս և ձիւնի շերտերին։ Այստեղ կարելի է տեսնել գետերի և ամպերի գոյացումը։ Սառած ձիւնի հաստ խաւերը արեգակի ճառագայթների տաքութիւնից կամաց-կամաց գոլորշանում են և մշուշի նման վեր բարձրանում, վեր սողում, կուտակւում իբրև ամպեր լեռների գագաթների շուրջը և սպասում օդային հոսանքներին՝ հեռու երկրներ չուելու համար։ Իսկ ձիւնի հալուած, պոկուած կաթիլները սառցային կամարի տակ կենդանանում, միանում են իրար հետ․ կաթիլների զատ-զատ ծլնկոցը վտակների մեղմ կարկաչիւն է դառնում։ Այդ վտակները ցատկոտելով քարերի վրայով, խփուելով ժայռերի անշարժութեան, զայրանում են, փըրփըրում, և ցասումի է փոխւում դրանց անուշ կարկաչիւնը․ իսկ երբ բոլոր վտակների ալիքները միախառնւում են ու գետ կազմում՝ արդէն առնական կորով արտայայտող մռնչիւն է լսւում․ զգում էք միլիոնաւոր մանր ոյժերից գոյացած մի զօրութիւն, որը կարող է և շինել և կործանել, նայած ուղղութեան և հանգամանքներին…

Digitized by Google

Սարալանջի ամենավերին մասերում ծխում էին թուրք օբաներ։ Մի ժայռի գլխին խաղում էին թուրք երեխաներ, որոնք մեզ նկատելով պարտք համարեցին գէթ միքանի խօսքերով էլ է հայհոյել հեռուից։

Միքանի պտոյտ էլ և արահետը մեզ հասցրեց Գազբոյլի թամբաձև ողնին։ Մեր յետևում մնացին Իշխլուն և Սաղսաղանը, իսկ մեր առջև՝ հին Ձորք կամ Կապան գաւառն է, որ մի ժամանակ ծառայում էր Սիւնեաց հզօր նախարարների համար իբրև անառիկ միջնաբերդ։

*
* *

Անդնդախոր, նեղ, խճճուած ձորերի և բարձրաբերձ, խիտառխիտ կանգնած լեռների մի աշխարհ էր այդ, որ հէնց առաջի հայեացքից իր աւելի դաժան ու խրոխտ արտաքինով տարբերւում էր հարևան գաւառից։ Բիզ-բիզ կանգնած հսկայ լեռների ամբոխի մէջ բարձրագլուխ դէպի երկինք էր ցցուած բոլորի յետևում մի ձիւնապատ, սրածայր գագաթ։

—Ի՞նչպէս է այն սարի անունը, հարց-

Digitized by Google

նում եմ ինձ ուղեկցող ձիապանից և ջորեպանից։

—Է՞ն, սար ա էլի…

—Անունը։

—Չգիտենք, աղա։

—Ի՞նչպէս թէ չգիտէք. առաջին անգամն էք տեսնում…

—Աղա, բաշխիր… մենք էլ առաջին անգամն ա, որ Քըջարանց ընք քընում…

—Լա՛ւ, բայց ինչո՞ւ փարձուելիս ինձ ասել էիք թէ ծանօթ է ձեզ ճանապարհը…

—Իմ հէրս միքանի անգամ անցել ա էդ ճամբով, ինձ էլ ասել ա թէ ինչպէս պէտմա քընալ, պատասխանեց ձիապանս։

—Հէր օրհնածներ, դրա համար էք ինձնից հինգ անգամ աւելի փարձ պահանջել, քան մի սրևէ ակցիզնուց… Ուրեմն, ինձ խաբել էք, ասելով թէ ճանապարհը դիտէք…

—Դէ՛, բաշխիր, աղա, չենք գիտացել որ սարի, գետի, ձորի անունները ըս մեզնից հարցնելու։ Դէ ճամբան էլ դուզ ճամբայ ա…

Ի՞նչ պէտք էր արած։ Մի քարի գըլխին թիկն էր տուել մի թուրք հովիւ.

Նրան դիմեցի ցոյց տալով ինձ հետաքըր-քրող սպրը։

—Խուստուփ, եղաւ Նրա պատասխանը։

Այդ գագաթը պատկանում է այն լեռ-նադօտուն, որ հարաւից անջրպետում է Զօրք գաւառը Արևիքից կամ Մեղրու կող-մերից։ Ուրեմն, ես գտնւում էի Զօրք գա-ւառի հիւսիսային սահմանագծի՝ Գազբոյլ լեռների վրայ, որտեղից տեսնում էի հա-կառակ անջրպետի ամենաբարձր կէտը։ Այդ տարածութիւնը ուղիղ գծով, երևի, 20 վերստ լինի։ Եւ այդ համեմատաբար չըն-չին տարածութեան վրայ կուտակուած են որքա՜ն ձորեր, լեռնապարեր, սրածայր գա-գաթներ, անդունդներ, խոխոմներ. լեռնա-յին վիթխարի կնճիռների մի զարմանալի լաբիւրինթոս ու քաօս!.. Այդ գաւառում մի ժամանակ աւելի մեծ թւով բերդեր կային, քան եկեղեցիներ։ Այդ գաւառում, մինչև Դաւիթ բէգը դեռ չէր մարել ազա-տութեան ոգին՝ միշտ թագնուած մնալով, ինչպէս մոխրի տակ ծածկուած կրակ...

Դա Սիւնեաց իշխան Վասակի «ամուր գաւառներից» մէկն է։ Նախքան մտնենք այդ երկիրը՝ մի բարոյական պարտքը համա-րենք—15 դար շարունակ Վասակ «Ուրա-

ցողի» հասցէին լսուող անէծք ու հայհոյանքի փոխարէն ունկն դնել և մի անաչառ ձայն, որ բարձրացրեց՝ մեր պատմութիւնը առաջին անգամ լուրջ քննական ոգուով ուսումնասիրող Գարագաշեանը։ Նրա հռչակաւոր «Քննական Պատմութեան» մէջ երևան են գալիս թէ Վասակի խրոխտ և քաջ նախնիները իրանց կորովի անհատականութեամբ և թէ ինքը դժբախտ Վասակը — կղերական կուսակցութեան միակողմանիութեան այդ զոհը, իբրև զրպարտուած և չհասկացուած մի խոշոր պատմական դէմք։ Թող ներուի մեզ, եթէ քաղուածօրէն առաջ բերենք այստեղ միքանի կտորներ Գարագաշեանի յիշած գրքից։

«Սուտ է և զրպարտութիւն, ինչպէս յայտնի է յընթացից և ի գործոց Վասակայ, ըստ վաւերականագոյն պատմութեան Փարպեցւոյն, թէ այս «խորհրդական, հանճարեղ և յառաջիմաց անձն»—(Կորիւնի խօսքերով)—էր հակառակ քրիստոնէութեան և թշնամի ազգին, ինչպէս բամբասուած է յանիրաւի։ Դարձեալ, եթէ Վասակ վաղուց էր ուրացեալ և գաղտ ի բանի ընդ Յազկերտի, միթէ կը խռովէ՞ր ընդ մեկնել Վարդանայ իւրովքն երթալ ի Յոյնս, և կը դարձունէ՞ր զնա յետս նամականւով և դեսպաններով. Ոչ ապաքէն կ'ուրախանար մանաւանդ, ինչպէս նա և կուսակիցք նորա, որ այնպիսի նշանաւոր անձ

Digitized by Google

մը, որպիսի է Վարդան, պակսեցաւ հանդերձ իրովքն ապստամբութեան (ուխտապահաց) խումբէն։ Այնչափ խռովելն և յուզել Վասակայ և իւրոցն՝ կը ցուցնէ, թէ չէին նոքա միտեալ յուրացութիւն, ուստի և զառնչելն նոցա յետոյ ի Վարդանեանց, ունէր այլ պատճառ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ, Անհնար էր Հայոց ընդունել կրակապաշտութիւնն ազգովին, իսկ զինուք ընդդիմանալ Յազկերտի՝ էր վտանգաւոր. ուստի լաւագոյն հնարքն էր՝ թողուլ մոգուց կատարել զիւրեանց պաշտօնն, այն է քարոզել մոգութիւնն ի Հայս, հաստատել կրակի պաշտօնը՝ շինելով ատրուշաններ։ Անտարակոյս, մոգքն արհամարհուելով ժողովուրդէն՝ կամ յուսահատեալ պիտի մեկնէին, և կամ գործը պիտի չգտնէր յաջողութիւն։ Եւ եղաւ իսկ այնպէս, ինչպէս կը վկայէ Փարպեցին»... «Կղերին պարտքն էր փոխանակ գաւառ գաւառ շրջելով յապստամբութիւն գրգռելոյ ժողովուրդը՝ վառել զնոսա հոգևորապէս ընդդէմ մօտալուտ վտանգին։ Իսկ Նախարարք, յետ զիջանելոյ կամաց Թագաւորին—տալոյ մուտ մոգուց իւրաքանչիւր յերկիր իւր՝ կրնային հաստատուն մնալ յուխտին իւրեանց յԱւետարանն, ինչպէս արարին իսկ»։

Կղերական կուսակցութեան դրդմամբ Վարդանը և նրա կողմնակիցները որոշում են ապստամբուել։ Եւ տեսնելով թէ ապստամբուելու խորհուրդը բացւում է և մեծ վնաս պիտի հասնէր դանդաղելուց առնելով ժողով եպիսկոպոսաց և Նախարարաց՝ որոշեց (Վարդան) յայտնել

Digitized by Google

գիրան Մարզպանին Վասակայ, որ տակաւին չէր գիտեր։ Ապա յանկարծ մտնելով նա և ընկերք նորա բազմութեամբ առ Վասակ՝ յայտնեցին նմա խորհուրդը և կը ստիպէին զնա միաբանել ընդ նոսա. Վասակ, որպէս ասէ Փարպեցին՝ ցուցուց դանդաղութիւն։ Յիրաւի կը դանդաղէր Վասակ, նախ՝ վասն զի իբրև Մարզպան (փոխարքայ) ինքն կը կրէր պատասխանատուութեան բոլոր ծանրութիւնը, և ունէր երկիւղ իւր որդւոց համար (պատանդ էին պարսից Թագաւորի մօտ). երկրորդ՝ հաւանական է թէ անխորհուրդ եռանդեան արդիւնք կը գտնէր գործը, ինչպէս կը վկայէ ինքն իսկ Փարպեցին, թէ Վարդան ոչ այնչափ յաղթութեան յուսով, որչափ մարտիրոսութեան փափաքով մղուած էր յայն խորհուրդ *)... «Զանք Վասակայ և իւրոցն օգտեցին գրեթէ ոչինչ։ Մարտիրոսական տենչը զօրաւոր էր ուխտապահ կոչուած մասին մէջ, մանաւանդ որ կղերին մեծ և երևելի մասն էր քաջալերիչ և խրատատու։ Ուստի Յազկերտ որոշեց զինու զօրութեամբ նուաճել զապստամբութիւնն»։ Հայերը պարտութիւն կրեցին. քիչ զօրք հաւաքուեց, զօրքի մի մասն էլ ակամայ էր եկած կռիւ և փախուստ դարձաւ...

«Մեծ յարգութեամբ հանդերձ, զոր ունինք առ Վարդանեանս, իբրև արդարև վկայս՝ պարտիմք խոստովանել, թէ չէր բնաւ իմաստութիւն միով մասամբ միայն ազգին, ամենևին զուրկ ար

*) Ընդգծումները և փակագծի մէջ խօսքերն մերն են

Digitized by Google

տաքին օգնութենէ՝ խիզախել Սասանեան պէս խրոխտ զօրութեան դէմ, զոր հռովմէական պետութիւնն անգամ չիշխեց գրգռել։ Սոյն այս կէտն է որ կ'արդարացնէ հակառակ կողմը։ Եթէ Վասակ, որ արդէն հակառակ էր ապստամբութեան խորհրդոյն, տեսնելով եւ Յունաց և գրեթէ բոլոր քրիստոնեայ աշխարհին հրաժարելն օգնելէ Հայոց և իբրև ապստամբութիւն՝ ազարտելն Հայոց շարժումը, բաժնուեցաւ երևելի մասով մը միաբանութենէն, ինչպէս կըցուցնէ Փարպեցին, այս դիպաց հաւատարմագոյն պատմիչը՝ չէր ամենևին դատապարտելի. մանաւանդ որ Վասակ ամեն ջան ի գործ դրաւ, իբրև միջնորդ ի կողմանէ Թագաւորին՝ յետս կացուցանել զազգն ապստամբութենէն, Թէպէտ ամեն ջան Վասակայ մեկնուեցաւ իբրև խաբէութիւն։ Եթէ ընդունինք, թէ Վարդան, իբրև նախանձաւոր քրիստոնեայ, ունէր պատճառ ընտրելու անյոյս պատերազմ մը, տեսնելով հաւատոյ աչօք մարտիրոսութեան պսակ՝ պարտինք ընդունել, թէ Վասակ, իբրև իմաստուն քաղաքագէտ՝ ունէր գոնէ նոյնչափ պատճառ ջանալու խափանել այն պատերազմն, իբրև յանդուգն ձեռնարկութիւն։ Կուսակցութեան կամ չափազանց եռանդեան ոգւով գրուած պատմութեան բոլոր վճիռները կ'ունայնանան խոհեմութեան կանոնին առջև։ Հալածանաց դէմ բարոյական զէնքն է օրինաւոր. բայց երբ հարկը կը ստիպէ բռնութիւնը բռնութեամբ վանել՝ խոհեմութեան կանոնը կը մտնէ մէջ։—Ո՞ր Թագաւոր երթեալ տայցէ պա-

Digitized by Google

*տերազմ ընդ այլում Թագաւորի, և ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ կարող իցէ տասն հազարաւ զդէմ ունել զայնորիկ, որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ. ապա թէ ոչ՝ մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակութիւն առաքեալ աղաչեսցէ ի խաղաղութիւն (Ղուկ. ժդ. 32)։—Մեր գանգատը չէ այն դիւցազն խմբին դէմ, որ իբրև բոյլ մի՝ համարուած է և պիտի համարուի միշտ հայ երկնին զարդ, այլ է այն միականիներուն դէմ, որ մի կողման եռանդը դիտելով մանր՝ չեն նայիր անգամ միւսոյ կողման իմաստութեան։ Վարդանանց պատմութիւնն է ըստ մեզ երկու կուսակցութեանց պատմութիւն. մին հոգևոր, աստուածային, որ զերկնաւորն միայն ունի ինքեան նպատակ, միւսն՝ մարմնաւոր և աշխարհական, որ ըստ մարդկային մտնոլորտն անդր չանցնիր։ Որովհետև ազգին վստահութիւնը գրաւող երկու պատմիչք, Փարպեցին և Եղիշէն, մանաւանդ վերջինն, ի բարձրացուցանելն զմին, զմիւսն կ'իջեցունեն չարաչար՝ անիրաւ դատում մը տիրած է յազգին ընդդէմ Վասակայ» *)։*

Սիւնեաց տէր Վասակը, պարսից արքայից արքայի այդ փոխանորդը բովանդակ Մեծ Հայաստանում, ս. Մեսրոպի աշակերտ Կորիւնի վկայութեամբ՝ «էր այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեան Աստուծոյ»։ Նա

---

*) *Գարագաշեան «Քնն. պատմ.», մասն գ. եր.* 132—134 *և* 142—143։

պատկանում էր ուժեղ անհատականութիւններով հռչակուած մի նախարարական տան, որ IV—V-րդ դարում ամենամեծ ազդեցութիւնն ու դիրքն ունէր Հայաստանում։ Նրա հաւը կամ պապի հայր քաջ Վաղինակը ամուսնացել էր Աղձնեաց (Սասունի կողմերի) ապստամբ բդեշխ Բակուրի դստեր հետ և, երևի, Սասունի լեռներից վերցրած իր գեղեցկուհու ծննդավայրը պատուելու նպատակով՝ Անդովկ *) անունն էր տուել իր անդրանիկ զաւակին... Եւ այդ Անդովկը իր սէգ, խրոխտ և խիզախ բնաւորութեամբ Սասունի ծմակներում մեծացած մի առիւծ էր, որի հարուածների կսկիծը չէր մոռանում արքայից արքայ Շապուհը։ Պարսից մայրաքաղաք Տիզբոնը աւերող Անդովկին անկարող եղաւ Շապուհը նուաճել պաշարելով նրան անառիկ Բաղաբերդում... Անդովկը Մամիկոնեանների փեսան էր, ինչպէս և Արշաւիր Կամսարականը։ Սիւնեաց և Մամիկոնեան հզօր նախարարներից ծընուեց Վասակի հայր Բաբիկը, որ իր քաջութեան և հոների վրայ տարած բազմաթիւ յաղթութիւնների շնորհիւ կարողա-

*) Սասունի գագաթներից մէկի անունը՝

ցաւ ամոքել Ձայունի վրէժխնդրութիւնը իրանց ցեղի վրայից։ Բաբիկի քոյրը (Վասակի հօրաքոյրը) էր իր գեղեցկութեամբ և կամքի ոյժով հռչակուած Փառանձեմը, որ եղաւ հայոց դժբախտ Արշակ թագաւորի կինը։ Անյուշ բերդում կաշկանդուած թագաւորի ամուսին Փառանձեմը 13 ամիս Արտագերս *) բերդում պաշտպանուեց պարսից դէմ։ Այդ Փառանձեմի զաւակն էր երիտասարդ Պապ թագաւորը· որ ձգտում էր ոչնչացնել Հայաստանում հրով և սրով աճած կղերական ֆէօդալիզմը. սակայն խելացի վերանորոգիչը ոչ միայն ստոր գրպարտութիւնների ենթարկուեց կղերի կողմից, այլև սպանուեց այդ կուսակցութեան օժանդակութեամբ... Վասակի քոյրը Հայաստանի յունական բաժնի (Փոքր Հայք) թագաւոր Արշակ Գ-ի կինն էր, իսկ Վասակի Դարա անունով եղբայրը այդ թագաւորի զօրքերի սպարապետը։ Վասակի երկու որդիներին (Ատրներսեհ և Բաբիկ) պարսից արքունիքում պահում էին իբրև պատանդ։ Վասակի դուստրը մարդու էր գնացել Վարազվաղանին, որ իր աներոջ

*) Կաղզուանի մօտ այժմ Քերս անունով գիւղը։

դէմ քսութեամբ գործող մի սրիկայ դուրս եկաւ. այդ Վարազվաղանը պարսից արքունիքում աշխատում էր սեւացնել Վասակին, որպէսզի վայր գլորելով աներոջ տիրանայ Սիւնեաց իշխանութեան։

Այդ բոլոր մանրամասնութիւնները ցոյց են տալիս որ Սիւնեաց նախարարական ընտանիքը հզօր անհատականութիւններից կազմուած մի նշանաւոր ցեղ էր, առիւծների զարմ... Եւ զարմանալի չէ, եթէ ճիշդ է թէ Վասակը ձգտում էր Հայոց աշխարհի թագաւորական պսակով զարդարել իր գլուխը. Նրա պատուին, հարստութեան, ոյժին և դիրքին, ինչպէս և նրա «խորհրդական, հանճարեղ, յառաջիմաց և իմաստուն» ճակատին նոյնքան կը սազէր այդ պսակը, որքան սազում էր «մարտիրոսական պսակը» Վարդանին...

*
* *

Գազբոյլի լեռնազօտուց սկսեցինք իջնել մի խոր և նեղ ձորի լանջի արահետով։ Մեր շուրջը բուսականութիւնը արդէն չունէր այն ճոխութիւնը, որ մենք թողինք սարի հիւսիսային կողմում։ Սարալանջերի

Digitized by Google

վերևի մասերում այսուայն կողմում Թուրք օրանե՛ր էին երևում։

Ձորի յատակը չհասած, մի աղբիւրակի մօտ իջանք հանգստանալու։ Ժայռերի տակից լսւում էր կաքաւների կղկղոցն, որ այդ անդնդախոր ձորերի ճնշող լռութեան մէջ առանձին ախորժանքով էր հնչում։ Խճճուած խոր ձորեր, վիհեր, դիք-դիք լեռներ պատած ցանցառ անտառներով, դարերով մթնոլորտային գործօնների ազդեցութիւնից աւերուած ժայռեր, հող ու խիճով ծածկուած զառիվայրեր—և ո՛չ մի շինութիւն մեր շուրջ։ Սոսկում էր զգում մարդ այդ խոր, ամայի և լուռ ձորերի աշխարհում…

Երբ իջանք ձորի յատակը այնտեղ տեսանք մի գետակ։ Էլ աւելորդ էր հարցնել ուղեկիցներիցս թէ ինչ գետակ է այդ, որովհետև, ինչպէս տեսանք, նրանք էլ առաջին անգամն էին այս կողմերում։

Այդտեղ ճանապարհը երկուսի էր բաժանւում, մէկը գետի ափով ուղիղ դէպի հարաւ էր ընթանում, իսկ միւսը զարիվեր բարձրանում էր դէպի աջ։

—Հայրդ ասել է թէ որ ճանապարհն

ընտրենք, հարցրի հեգնութեամբ ձիապանից։

—Աղա, հրէն մի ծառի տակին մի թուրք է նստած, քընամ նրան հարցնեմ, պատասխանեց նրա փոխարէն ջորեպանը։

—Չմոռանաս գետակի անունը հարցնելու, ասացի նրան։

Թուրքը խորհուրդ էր տուել դարիվեր շաւղով շարունակել մեր ճանապարհը։ Մենք այդպէս էլ արինք։

—Բաս գետի անո՞ւնը։

—Աղա, գետ ա էլի. իրա համար քըռնում ա... Հարցրի, ամա լաւ չլսեցի. Գիբաթաղ-չայ ա, ինչ ա...

Ինձ զարմացնում էր այն, որ՝ այդ մարդիկ էլ առաջին անգամ լինելով այդ կողմերում՝ նոյնքան էին հետաքրքրւում շրջակայքով, որքան դրանց անասունները...

Ջորեպանս հեծաւ իր վիթխարի ջորին, որի բեռը կէս պուդ էլ չէր լինի, և վեր սլացաւ, յայտնելով որ ճանապարհը դէպի Քաջարանց հէնց այն է, որ կայ։ Բարձրացանք և իջանք մի այլ ձոր։ Դարձեալ մի գետակ, որ դէպի հարաւ էր հոսում։

—Հայրդ բա՞ն չի ասել այդ մասին,

Digitized by Google

հարցրի քմծիծաղով ձիապանից, որ ոտքով էր քայլում մեր յետևից։ Պատասխանի փոխարէն աչքերը գետին գցեց տղան, իսկ նրա ընկերը, բազմած ջորու վրայ, անձնավստահութեամբ համոզում էր մեզ՝ հետևել իրան վերևի արահետով։

—Աղա, հիմա ես լաւ գիտամ, էսպէս ա, էսպէս, քշիր…

Մի քիչ վիճելուց յետոյ, թէև տատանուելով, բայց հնազանդուեցի. և կոյրը կոյրին պէտք է առաջնորդէր…

Արահետը անընդհատ վեր է բարձրանում և ստանում արևմտա-հիւսիսային ուղղութիւն։

—Տօ, ո՞ւր ես տանում մեզ, հարցրեցի համբերութիւնս հատած։

—Աղա, եկէք, եկէք, էսպէս ա։

—Ի՞նչպէս թէ էդպէս է, դու յետ-յետ ես գնում, հեռանում ես, նկատեցի իրան։

Նա կանգնեց շուարած և կտրուած իջաւ ջորուց, քորեց վզակոթը և ասաց.

—Դէ էս չեղաւ, աղա՛, բաշխիր։ Պէտք ա յետ քընանք։ Էս փիս տեռաւ… շատ փիս պեան տեռաւ…

Ձորի ներքևում ծառերի արանքով հազիւ նշմարւում էր միւս կածանը։ Իջա

Digitized by Google

ձկուց և, չուզենալով յետ գնալ եկած ճանապարհով, սարալանջի զառիվայրով ուղղակի դիմեցինք ներքև։ Իմ առաջնորդներս սաստիկ խղճահարւում էին և ամօթից էլ ձէն չէին հանում...

Ես յիշում էի որ մենք պէտք է իջնենք Գեղուայ գետի հովիտը, որ Գազբոյլի լեռնագօտուն զուգընթաց ուղղութիւն ունի արևելքից-արևմուտք։ Դէպ հարաւ հոսող մեր տեսած երկու գետակները Գեղուայ գետի օժանդակները պէտք է լինէին։ Գիտէի որ Քաջարանից գետեղուած է Օխչու գետի ափին, որ Գեղուայ գետից հարաւ է գտընւում և հոսում է սկզբում սրան զուգընթաց և ապա միայն, Բաղաց աշխարհը մտնելուց առաջ, միանում է սրա հետ և իբրև մի գետ առաջ գնում, կրելով Կապանի կամ Չաւնդուր գետ անունը մինչև Արաքս թափուիլը։ Պէտք էր, ուրեմն, հարաւային ուղղութեամբ գնալ մինչև որ դուրս գանք Գեղուայ գետի հովիտը։

Իջնել ներքև դիք, քարքարոտ, փշերով ու մացառներով ծածկուած սարալանջով բաւական անախորժ զբօսանք էր, և ես՝ մինչև որ ձորի ստորոտում հոսող գետակի ափին հասայ՝ հալից ընկել էի ար-

Digitized by Google

դէն։ Մեր ոտերի տակից, խոտերի միջից դուրս էին թռչում մայր կաքաւներ, անպաշտպան թողնելով սիրուն ձագուկները մեր ձեռքում...

Գետակը հոսում էր նեղ ապառաժոտ ձորում։ Ծառերի ստուերի տակ մի քիչ հանգստացանք. սառը ջրի մէջ երես ու գլուխ լուացինք, զովացանք և առաջ գնացինք մի արահետով, որ քայլողից եթէ ոչ սատանի, գէթ այծի հնարագիտութիւն էր պահանջում... Տարաբախտաբար, քաղաքային նստակեաց կեանքը ո՞րտեղից կարող էր զարգացնել ոտների և շարժումների այդպիսի ճարպիկութիւն. մնում էր չափազանց զգուշութիւններով քայլել նեղ շաւղով և ամեն րոպէ վախվխել՝ ներքև, գետակի մէջ, գլորուելուց...

Երկար ժամանակ գնում էինք անիծած ձորով, առանց հանդիպելու որևէ մարդու, թէև երևում էին կիսատ-պռատ մշակուած հողեր ձորալանջերի վրայ։

Մէկ էլ յանկարծ աննկատելի կերպով մենք մեզ տեսանք կանգնած կտուրների վրայ. քիչ էր մնում որ ձիս ընկնէր կտուրի փլուածքով ուղիղ խրճիթի մէջ... Մի կոյտ ողորմելի, իրար կպած, կիսագետնա-

Digitized by Google

փոր տնակների հարթ կտուրների վրայ մի քանի թուրքեր ինչոր բոյսից չուաններ էին գործում։ Նրանք, գարմանքից ապուշ կըտրած, մեզ վրայ այնպէս էին նայում, ինչպէս, երևի, ամերիկացի վայրենիները Կոլումբոսի վրայ...

—Էդ աղան ինչ բան ունի էս ձորերում, նա ո՞վ է, հարցնում էին նրանք կամայուկ իմ ջորեպանից։

—Ինժեներ է, եկել է հանքեր որոնելու, ասաց տամհացին, չգիտեմ՝ հանաքո՞վ, թէ ինքն էլ հէնց այդպէս էր համոզուած...

Իջնելով այդ Ղարաբաշ կոչուած գիւղի զառիվայրից մեզ ծանօթ գետակի ձորը, միքանի քայլ արինք և դուրս եկանք Գեզուայ գետի սքանչելի հովիտը, որ ամբողջապէս դարաւոր հսկայ ընկուզենիների մի պուրակ էր ներկայացնում։ Գեզուայ յորդառատ, լայն գետը խրոխտ շառաչիւնով իր սրընթաց փրփրադէզ ալիքներն էր գլորում, հոսելով արևմտքից դէպի արևելք։ Հեռւում, որտեղից գետն էր դէպի մեզ թաւալում, ձորի երկու դալար ու դիք ցցուած կողերից մէկը՝ մեր կողմինը՝ ծրռւում էր և մտնում հակառակ լեռների թիկունքը։ Երկու կողերի արանքում ծառերի

պուրակ էր փռուած և գետը կարծես ուղղակի նրա տակից լինէր ժայթքում։ Այդ լեռների վերևի մասում մի ճեղք էր բացուած, որից դէնը երևում էր վիթխարի ձիւնազգացած լեռնագօտու մի փոքր կտոր միայն։

* * *

Գեղուայ եզերքով ձգուած ճանապարհը այժմ աչքիս լայն խճուղու տպաւորութիւն էր թողնում։ Երթևեկութիւնը կենդանութիւն էր տալիս այդ հովտին. մենք հանդիպում էինք թուրք գիւղացիների՝ բեռնաբարձ ձիերով, ջորիներով և էշերով։ Պատահում էին թուրք երեխաներ և կանայք. այս վերջինները ինձ տեսնելիս իսկոյն շտապում էին չադրաներով ծածկել իրանց երեսները, թողնելով բաց իրանց մերկ սրունքները։ Գետի հակառակ ափին Մալլալը թուրք գիւղն էր։

Ջորեպանս դարձեալ բազմեց իր ջորու վրայ, և քշեց առաջ, բնաւ չմտածելով որ իր ընկերը ամբողջ ճանապարհը ոտքով է քայլել։

—Տօ, ինչ կը լինի որ թողնես ընկեր

էլ մի քիչ նստի ջորիդ և հանգստանայ։ Ախր որ բեռս ծանր լինէր չէ՞ որ դու էլ պէտք է ընկերիդ պէս ոտքով քայլէիր…

—Լաւ ես ասում, աղա, մի քիչ էլ քը-նանք՝ կը թողնեմ որ նա էլ նստի,—ասաց նա, աշխատելով ամեն կերպ ջնջել մեր թափառումների պատճառած վատ տպաւո-րութիւնը։

Մենք արդէն հասել էինք այնտեղ, ուր Գեղուայ գետը թափւում է Օխչու գետի մէջ։ Այնտեղ ուր միանում են Զորքի այդ երկու գեղանի գետերը՝ գտնւում են հըռ-չակաւոր Ձեվու բերդի աւերակները։ Դա այն Ձեվուն է, ուր Ասլամազ Ղուլի խանը իր զօրքերով անկարող եղաւ դիմադրել Դաւիթ բէգի նրկու քաջ համհարզների՝ Մխիթար Սպարապետի և Տէր-Աւետիքի՝ հնարագիտութեան և կատաղի գրոհի ա-ռաջ…

Երկու ջրերը միանալով կազմում են ահագին գետ, որ շարունակում է իր սրըն-թաց վազքը դէպի արևելք, անցնում է Ա-չախու և Հալիձորի բերդերի արանքով և մտնում Բաղաց աշխարհը։

Դեռ չհասած երկու ջրերի միախառնման տեղը, մենք մտանք Գեղուայ գետը, որով-

Digitized by Google

հետև նրա վրայով կամուրջը քանդուել էր։ Չիս լողիլող հասաւ միւս ափը։ Որքան և աշխատում էի ոտներս ասպանդակներից հանել և բարձր պահել ջրից, բայց և այնպէս այնքան խորն էր գետը, անգամ ամենածանծաղ մասում, որ ջրով լցուեցին կօշիկներս։

Անցնելով միւս ափ, մենք շրջեցինք այն լեռնագօտու ծայրով, որ ընկած է Գեղուայ և Օխչու գետերի մէջ ինչպէս անջրպետ և յայտնի է Փիրամզա անունով։ Այժմ մենք գտնւում էինք Օխչու գետի հովտում և նրա հոսանքի դիմաց դէպի արևմուտք էինք գրնում։ Աջ ու ձախ կողմից դէպի հովիտն են բացւում խոր ձորակների անվերջ շարքեր։ Սարալանջերը՝ անտառապատ, բաց տեղերը՝ մշակուած արտեր, աւելի բարձրերում՝ արօտատեղիներ։

Անցնելով Քրդիկենց ու Հանդ գիւղերի մօտով և Օխչի թուրք գիւղի միջով՝ մենք մինչև «ժամեր տալը» հասանք Քաջարաց հայկական գիւղը, որ աւելի ծանօտ է Գեջանան թուրք յորջորջմամբ։ Նեղ, ծուռումուռ, զառիվեր, կեղտոտ փողոցներով հասանք գիւղական քահանայի երկյարկանի տնակի առաջ։ Իջնելով ձիուց ես

հագիւ էի կարողանում քայլել. այնքա՜ն յոգնել էի...

* * *

Երիցակինը, նկատելով մեզ, իսկոյն սկսեց աւելել և կարգի բերել պատշգամբը։ Շուտով եկաւ և գիւղի քահանան՝ մի առոյգ թուխ-կարմիր տղամարդ։ Բարձրացանք պատշգամբը, որի սիւներից մեխած էին քարայծերի գլուխներ ահագին պոզերով, իսկ սիւների արանքում քաշուած թոկերից կախկխած էին ծամերի նման հիւսուած բանջարի ցողուններ։ Փոքրիկ բակը՝ առանց դարբասի, և միայն կիսատ-պռատ քարի պատերով էր բաժանուած փողոցից։ Բակին կից՝ գիւղական ժամը.— քառակուսի մի շինութիւն անտաշ քարերից, հողածածկ կտուրով։ Ծռուած, փայտէ ցածրիկ զանգատունն էր ցոյց տալիս, որ այդ շինութիւնը մատուռ չէ, այլ եկեղեցի։ Այսօր նրա մի հատիկ փոքրիկ զանգակի զօղանջիւնն էլ չլսուեց. քահանան զբաղուած էր։ Եկեղեցուց մինչև գետը կուչ են եկել խեղճ ու մեղճ տնակներ։

Այն բոլորը ինչոր մարդկային էր՝ աղ-

Digitized by Google

քատութեան և տգիտութեան դրօշմ էր կրում այդ հրաշալի և ճոխ բնութեան մէջ, որ կարող էր մրցել Զուիցերիայի ամենագեղեցիկ տեսարանների հետ։ Հէնց այդ պետը․ ինչպիսի՜ գեղեցկութիւն և միաժամանակ ի՜նչ ահագին էներգիա նրա անզուսպ ալիքների մէջ… Եւ այդ անբաւ ոյժը, ինչպէս և շրջապատող բնութեան գեղեցկութիւնը և հարստութիւնները՝ կորչում են մեր կեանքի դժբախտ հիւսուածքի շնորհիւ…

Այդ հայ գիւղը շրջապատուած է Փիրզօուղան, Օխչի և Ձարաղին թրքաբնակ գիւղերով։ Քաջարանց գիւղում 70 ծուխ կամ մօտ 600 շունչ հայեր են ապրում։ Եւ այդքան մարդկանց տրուած է միմիայն 439 դեսեատին հող, որից 200-ը արօտատեղի։ Այդ պատառիկների մի մասն էլ դեռ ուզում են խլել հարևան թուրք գիշատիչները՝ բէգերը… Գաղափար կազմելու համար հողի այդ սակաւութեան մասին՝ բաւական է իմանալ որ նոյն Զանգեզուրի Բազարչայ ռուսական գիւղի 65 ծուխին յատկացրուած է 3262 դեսեատին հող…

Բնականաբար քաջարանցցին աղքատ է, ուստի պանդխտութիւնը տնտեսական ան-

հրաժեշտութիւն է նրա համար. 4 եզ, նոյնքան կով, 50—60 ոչխար ունեցողը լաւ տուն է համարւում։ Աչող տարին այդպիսի տունը հազիւ այնքան գարի, ցորեն, չալտար և բակլա է ունենում որ իրան բաւականութիւն է տալիս։ Անաչող տարիներում 6 ամսուայ պաշարը պէտք է դրամով գնել։ Ի՞նչպէս ծայրը ծայրին հասցնեն աւելի չքաւորները, առանց դիմելու պանդխտութեան...

Սեպտ. 20-ից մինչև մայիսի 20 այդ հովիտը ձիւնի տակ թաղուած է։ Հաղորդակցութիւնը պահպանւում է միայն Բաղաց աշխարհի կամ Մաղանի հետ։ Պոստային հաղորդակցութեան մասին խօսելն անգամ աւելորդ է... Դպրոցի երես չեն էլ տեսել. գիւղական տէրտէրի մօտ են քիչ-միչ կարդալ-գրել սովորում... Տխուր մտածմունքներով պաշարուած նայում էի շուրջս, մէկ էլ տեսնեմ փողոցում մի շիկամօրուս մուժիկ, յետքին արած մի թուրք, որի ուսով գցուած էր խուրջին՝ ինչ որ գործիքներով։ Հնարագէտ ռուսը ֆոնոգրաֆ էր ման ածում գիւղից գիւղ և քաղաքակրթութեան գէթ այդ բարիքի մասին կարող էին հասկացողութիւն կազմել ձորերում մոռացուած մարդիկ։ Ինձ համար մի սիւրպրիզ էր այդ «կուլտուրտրեգերի» ներկայութիւնը Քաջարանցի սէս տեղում...

*
* *

Գիշերը քնել պատշգամբում չէի կա-
րողանում. Թաղիքների և գորգերի մէջ ա-
պաստանուած լուերի լեգիոնները յարձա-
կուել էին ինձ վրայ, ինչպէս մի թշնամի
օտարականի վրայ։ Ես ստիպուած էի դի-
տել աստղազարդ երկինքը, լսել հզօր գե-
տի անվերջ երգը մինչև լուսաբաց... Ժամի
6-ն էր, երբ մի քաջարանցցի ձիապանի և
ջորեպանի հետ ճանապարհ ընկայ Օխչու
գետի հոսանքով դէպի վեր, նպատակ ունե-
նալով անցնել Գափուջղով Գողթան գաւառը։

Մարդ չէր կշտանում այդ յորդ գետի
հմայող գեղեցկութիւնից։ Ամեն քայլափո-
խում նա ջրվէժներ է ներկայացնում. փրր-
փրած, կապուտակ կոհակները դահավի-
ժուելով ներքև պտտում էին հունի զոգա-
ւորութիւնների մէջ, յորձանք տալիս և
կայտառ գազանի նման դուրս ցատկում,
զարնում գետաքարերին և խայտալով ա-
ռաջ վազում խօլական զոռում գոչիւնով...
Այդ գետը ուժ ու սիրտ տուող, խիզախու-
թիւն ներշնչող մի ինչ որ զգայմունք էր
զարթեցնում, կարծես կենսուրախ և պա-
տասէր երգ լինէր նա երգում...

—Աղա, հրէն Եաղլու-դարան. ուզո՞ւմ
ես նրա վրայով բարձրանանք և ուղիղ դուրս
գանք Ուամիս, Ցաղնայ գետի ձորը։ Էդ ճամ-
բան աւելի դժուար ա, համա կարճ ա. -
ասաց ջորեպանս։

—Ոչ, ես ուզում եմ բարձրանալ Գա-

Digitized by Google